Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2013Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վարշավա
2013թ. Մայիսի 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ .....ERROR! BOOKMARK NOT DEFINED.

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ **6**

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ **6**

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ **7**

V. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ **10**

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ **12**

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ **14**

VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. **16**

IX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ **22**

Ա. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....22
Բ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....23
Գ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆԴԱ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ 25

X. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ **27**

XI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ **29**

XII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ **33**

Ա. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....34
Բ. ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄ 36
Գ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ.....37

XIII. ՀԵՏ ԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ **38**

XIV. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ **42**

Ա. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....42
Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....44

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ **48**

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ **49**

Հայաստանի Հանրապետություն
Նախագահի ընտրություններ
2013թ. Փետրվարի 18

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության
վերջնական զեկույց[1]

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերի հիման վրա, 2013թ. հունվարի 10-ին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ ԺՀՄԻԳ) հաստատել է Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ)՝ Հայաստանում 2013թ. փետրվարի 18-ի Նախագահի ընտրությունները դիտարկելու նպատակով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատել է ընտրական գործընթացների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Քվեարկության օրը դիտարկելու նպատակով, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) պատվիրակությունների հետ համատեղ ԸԴԱ-ն կազմել է Միջազգային ընտրությունների դիտորդական առաքելություն (ՄԸԴԱ):

2013թ. փետրվարի 19-ին ՄԸԴԱ-ի կողմից հրապարակված Նախնական հանգամանքների և եզրակացությունների հայտարարության մեջ ամփոփվում է, որ ընտրությունները § ընդհանուր առմամբ լավ կազմակերպված էին և բնութագրվում էին հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորմամբ: Մրցակիցները կարողացել են իրականացնել ազատ քարոզչություն: Լրատվամիջոցները կատարել են իրենց իրավական հավասարակշիռ լուսաբանում տրամադրելու պարտավորությունը և բոլոր մրցակիցները օգտագործել են իրենց տրամադրվող անվճար եթերաժամը: Միաժամանակ, հանրային կառավարման անաչառության պակասը, վարչական միջոցների չարաշահումը և ընտրողների վրա կիրառվող ճնշումը մտահոգիչ են եղել: Թեպետ ընտրությունների օրը անցել է հանգիստ և բնականոն, ընտրական գործընթացի անհարկի միջամտություններ են նկատվել՝ հիմնականում գործող նախագահի վստահված անձանց կողմից, և որոշ լուրջ խախտումներ են դիտարկվել:¦

Ընտրական օրենսդրությունը համապարփակ է և, եթե այն իրականացվի պատշաճ կերպով, ընդհանուր առմամբ նպաստավոր է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Մի շարք դեպքերում իշխանությունները հայտնել են իրենց մտադրությունը անցկացնել ընտրությունները միջազգային չափորոշիչներին և Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ պարտավորություններին համապատասխան: Միևնույն ժամանակ, ընտրական գործընթացի թերությունները հիմնականում պայմանավորված էին իրավական դրույթները արդյունավետ և անաչառ կերպով կատարելու կամքի բացակայությամբ: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության մակարդակը մնում է ցածր:

---

[1] Միակ պաշտոնական փաստաթուղթը հանդիսանում է սույն զեկույցի անգլերեն լեզվով տարբերակը:

Հանրապետության Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է կառավարության ներկայացուցիչներից և այլ պետական պաշտոնյաներից բաղկացած աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է ուսումնասիրել 2012թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցում, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպությունների ներկայացված առաջարկությունները և պատրաստել գործողությունների ծրագիր՝ նշված առաջարկություններն իրականացնելու համար: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքները ներկայացվել են 2012 թվականի հոկտեմբերին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, որն առաջարկել է զերծ մնալ օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ կատարելուց առաջիկա ընտրությունների նախաշեմին՝ դրական ընտրական փորձի համաձայն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից գլխավորած ընտրությունները կազմակերպող մարմինները ընտրությունների վարչարարությունն իրականացրել են ընդհանուր առմամբ արհեստավարժորեն և ըստ օրենքով սահմանված վերջնաժամկետների: ԿԸՀ-ն աշխատել է բաց և թափանցիկ, հաստատել հիմնական ընթացակարգային կանոնները, ձևերը և հրահանգները քվեարկությունից նախօրոք, որոնք հասանելի են եղել ԿԸՀ-ի կայքէջում: Քարոզչության ֆինանսավորման կանոնները խստացվել են նոր Ընտրական օրենսգրքում: Սակայն, ԿԸՀ-ն չի տրամադրել պատշաճ մեկնաբանություններ քարոզարշավի ֆինանսավորման որոշ կանոնակարգերի վերաբերյալ: ԿԸՀ-ն համապարփակ գործընթացով հավատարմագրել է 26 հասարակական կազմակերպություններ ներկայացնող 6200 տեղական դիտորդների:

Ընտրողների ռեգիստրի և ընտրողների ցուցակների որակը բարելավվել է իշխանությունների կողմից ձեռնարկված մի շարք միջոցների շնորհիվ, այդ թվում՝ տարբեր պետական կառույցների միջև տեղեկատվության ավելի լավ փոխանակում ապահովելու նպատակով իրականացվող փորձնական ծրագրի շնորհիվ: Թեև իշխանությունները լուրջ ջանքեր են գործադրել ընտրողների ռեգիստրը տեխնիկապես բարելավելու համար, նրանց չի հաջողվել փարատել համընդհանուր անվստահությունը ընտրողների գրանցման ամբողջականության վերաբերյալ: Նախագահի մի քանի թեկնածուներ բարձրաձայնել են իրենց մտահոգությունները ընտրացուցակների վերաբերյալ՝ պնդելով, որ գրանցված ընտրողների թիվը չափազանց ուռճացված է և կարող է օգտագործվել ընտրությունների օրը արտերկրում բնակվող ընտրողների փոխարեն քվեարկության համար, սակայն նրանք որևէ ապացույց չեն տրամադրել՝ իրենց հայտարարությունները պաշտպանելու համար:

Թեկնածուների գրանցումը եղել է համապարփակ. ԿԸՀ-ն գրանցել է բոլոր ութ թեկնածուներին, որոնք ներկայացրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը և վճարել են պահանջվող ընտրական գրավը (հետագայում մեկ թեկնածու ինքնաբացարկ է հայտնել): Այնուամենայնիվ, թեկնածուների գրանցման համար սահմանված 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջներն ավելի քան խիստ են:

Քարոզարշավը ընդհանուր առմամբ սահմանափակ էր: Ի տարբերություն, գործող նախագահ Սերժ Սարգսյանի քարոզչական գործունեությանը առավել տեսանելի էր: Քարոզարշավը տեղի է ունեցել մի քանի խորհրդարանական կուսակցությունների

թեկնածու չառաջադրելու և որոշ կարկառուն գործիչների չառաջադրվելու որոշման պայմաններում: Քարոզարշավի ընթացքում թեկնածուներից մեկը ստացել է հրազենային վնասվածք: Չնայած այդ միջադեպի, քարոզարշավը շարունակել է ընթանալ խաղաղ:

Թեև քարոզարշավը բնութագրվել է հիմնարար ազատությունների նկատմամբ ընդհանուր հարգանքի դրսևորմամբ, և մրցակիցները կարողացել են անխոչընդոտ իրականացնել իրենց քարոզչությունը, քարոզարշավի կանոնակարգումները թույլ են տվել վարչական ռեսուրսի չարաշահումներ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նաև դիտարկել է ընտրողներին ահաբեկելու և նրանց վրա ճնշում գործադրելու դեպքեր: Սա չի ստեղծել "խաղի" հավասար կանոններ թեկնածուների միջև, ինչպես նաև չի տրամադրել ընտրողներին տեղեկացված ընտրություն անելու և պատժից երկյուղ չկրելով ազատորեն քվեարկելու հնարավորություն, ինչպես ամրագրված է ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:

Քարոզարշավի ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկվել է հանրային կառավարման անկողմնակալության պակաս և վարչական միջոցների չարաշահումը:: Այդ թվում, մեծ թվով պետական և տեղական կառավարման մարմինների պաշտոնյաներ մասնակցել են քարոզչական միջոցառումներին, ինչ նպաստել է պետության և քաղաքական կուսակցության, ինչպես նաև պաշտոնական և քարոզչական գործառույթների բաժանման աղճատմանը: Ի լրումն, մի շարք նախընտրական շտաբներ գտնվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած կամ նրանց պատկանող շենքերում: Նման դեպքեր հակասում են 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերությանը, որը կոչ է անում տարանջատել պետությունը և քաղաքական կուսակցությունը:

անրային հեռուստատեսությունը և ռադիոն կատարել են թեկնածուներին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու իրենց պարտավորությունը: Բոլոր թեկնածուները օգտագործել են իրենց անվճար եթերաժամը: Լրատվամիջոցները էական ուշադրություն են դարձրել քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությանը, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից մշտադիտարկվող լրատվամիջոցները պարբերաբար լուսաբանել են բոլոր թեկնածուներին: Սակայն, մշտադիտարկված հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը լսարանին առաջարկել է ֆորմալ լրատվական լուսաբանում՝ կենտրոնացնելով ուշադրությունը գերազանցապես քարոզարշավի իրադարձությունների վրա և չտրամադրելով թեկնածուների քարոզչական ուղերձների վերլուծական մեկնաբանում կամ ներկայացնելով գործող նախագահի գործունեությունը: Թեկնածուներից գործող նախագահի և Ռաֆֆի Հովհաննիսյանի լուսաբանումը եղել է առավել ծավալուն, ինչն արտացոլում էր այն փաստը, որ նրանք ամենաակտիվն են իրականացրել քարոզարշավը: Թեկնածուների միջև բանավեճի բացակայության պատճառով ընտրողները զրկվել են բովանդակալից երկխոսության տեսնելու հնարավորությունից, ինչ կարող էր ներկայացնել մրցակից թեկնածուների նախընտրական ծրագրերը կամ գործող նախագահի գործունեությունը իր պաշտոնավարման ընթացքում:

Ընտրություններին առնչվող բողոքներ ներկայացնելու իրավունքը անհիմն սահմանափակված է, և ընտրական իրավունքների վերաբերյալ դատարանի որոշումները

բողոքարկման ենթակա չեն: Նախքան ընտրությունների օրը ԿԸՀ-ն և դատարանները ստացել են սահմանափակ թվով բողոքներ, որոնք կամ չեն քննարկվել, կամ մերժվել են: Բողոքների լուծման ընթացքում ԿԸՀ-ն շարունակաբար կիրառել է չափազանց ձևական մոտեցում, որի արդյունքում բողոքները կամ համարվել են անընդունելի, կամ մերժվել: Ընտրական վեճերի լուծումը չի տրամադրել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ և չի երաշխավորել իրավական ամբողջականությունը և հետևաբար չի համապատասխանել 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությամբ ամրագրված պահանջներին:

Ընտրությունների օրը ընդհանուր առմամբ հանդարտ էր և խաղաղ: Քվեարկության ընթացքը լավ կազմակերպված էր ՄԸԴԱ-ի դիտորդների կողմից այցելած ընտրական տեղամասերի մեծամասնությունում: Այնուամենայնիվ, դիտարկված դեպքերի 5 տոկոսը գնահատվել է բացասականորեն՝ շատ հաճախ գործող նախագահի վստահված անձանց կողմից ընթացքին անտեղի միջամտելու, լարվածության կամ անհանգստության, տեղամասերի դրսում մարդկանց մեծ խմբերի առկայության և ներսում կուտակումների, ինչպես նաև քվեարկության ժամերին տեղի ունեցած մի շարք լուրջ ընտրախախտումների պատճառով: Ընտրողների անձնագրերում դրվող հատուկ կնիքի թանաքը, որը բազմակի քվեարկության դեմ երաշխիք է, հեշտությամբ մաքրվել է, չնայած ԿԸՀ-ի նախնական փորձարկումներին: Ըստ ՄԸԴԱ-ի դիտորդների, ձայների հաշվարկման գործընթացը հիմնականում համապատասխանել է ընթացակարգերին և գնահատվել է դրական, թեպետ դիտորդները զեկուցել են ընթացակարգային խախտումների և թերությունների, ինչպես նաև թափանցիկության պակասի դեպքերի մասին:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) կողմից արդյունքների աղյուսակավորումը գնահատվել է ընդհանուր առմամբ դրական և բնութագրվել իբրև արդյունավետ և լավ կազմակերպված: Սակայն, ՄԸԴԱ-ի դիտորդները արձանագրել են ԸԸՀ-ների անհամապատասխան տարածքների և մարդկանց կուտակումների դեպքեր, ինչպես նաև ընթացակարգային սխալների : ԸԸՀ-ների մեկ երրորդում ՄԸԴԱ-ի դիտորդները չեն կարողացել պատշաճ կերպով դիտարկել ընտրությունների արդյունքների համակարգչային մուտքագրումը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած ընտրությունների վերջնական արդյունքների հիման վրա ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կատարած վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է գործող նախագահի օգտին ստացված զգալիորեն լավ արդյունքների միտում այն տեղամասերի մեծամասնությունում, որտեղ միջինից բարձր մասնակցության թիվ է գրանցվել: Այս հանգամանքը մատնանշում է քվեարկության հետ կապված հնարավոր լուրջ խնդիրների մասին և առաջացնում է մտահոգություն ընտրական գործընթացի ամբողջականության վերաբերյալ:

Ընտրությունների հաջորդ օրը պարոն Հովհաննիսյանը վիճարկել է ընտրությունների նախնական արդյունքները, անցկացրել բողոքի ցույցեր Երևանում և այցելել մի շարք քաղաքներ մարզերում: Նա պահանջել է, որ հետաքննվեն ընտրություններին առնչվող բոլոր իրավախախտումները և անցկացվի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ, կամ այլապես կառավարությունը ներկայացնի հրաժարական և անցկացվեն վաղ

խորհրդարանական ընտրություններ: Հիմնական հեռարձակվող լրատվամիջոցները, այդ թվում Հանրային *Հ1* հեռուստաալիքը, հետընտրական իրադարձությունների լուսաբանման մեջ ցուցաբերել են խտրական մոտեցում՝ ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատական տեսակետները սահմանակափակելու նկատելի միտումով: Նրանք հաճախ ներկայացրել են բողոքի ցույցերի միայն ընդհանուր և երբեմն նաև ծայրահեղ սահմանափակ լուսաբանում:

Ընտրությունների հաջորդ օրը ստացվել է 120 ՏԸՀ-ների արդյունքների անվավեր ճանաչելու, ինչպես նաև 20 վերահաշվարկի դիմումներ, որոցից գրեթե բոլորը պարոն Հովհաննիսյանի վստահված անձանց կողմից: Վերահաշվարկի բոլոր դիմումները, որոնք ներկայացվել են վստահված անձանց կողմից, մերժվել են ընտրական հանձնաժողովների կողմից քանի, որ վերջիններս չեն համարել դիմումատուներին իրավասու այդ դիմումները ներկայացնելու համար: Արդյունքները անվավեր ճանաչելու դիմումները կամ չեն ընդունվել վարույթ քանի, որ նրանք ներկայացվել են օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո, կամ մեժվել որպես անհիման: Պարոն Հովհաննիսյանի ներկայացրած բողոքը, որտեղ նա պահանջում է անվավեր ճանաչել գործող նախագահի գրանցումը որպես թեկնածու, քանի որ վերջինս գերազանցել է նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը, մերժվել է ԿԸՀ-ի կողմից և հետագայում բողոքարկման ընթացքում մերժվել Վարչական դատարանի կողմից:

Փետրվարի 25-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է վերջնական արդյունքները, ըստ որոնց պարոն Սարգսյանը հաղթել է ընտրություններում : Պարոն Հովհաննիսյանը և նախագահի այլ թեկնածու պարոն Անդրիաս Ղուկասյանը դիմում են ներկայացրել Սահմանադրական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները լայնամասշտաբ խախտումների հիման վրա: Պարոն Հովհաննիսյանը նաև պահանջել է Դատարանից հայտարարել իր հաղթանակը ընտրություններում: Մարտի 14-ին Դատարանը հաստատել է ԿԸՀ-ի գործող նախագահին վերընտրված հայտարարելու որոշումը այն հիմքով, որ ներկայացված փաստերի մեծամասնությունը անհիմն են և չեն կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերի հիման վրա, 2013թ. հունվարի 10-ին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ ԺՀՄԻԳ) հաստատել է Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ)՝ Հայաստանում 2013թ. փետրվարի 18-ի Նախագահի ընտրությունները դիտարկելու նպատակով: ԸԴԱ-ն գլխավորում էր տիկին դեսպան Հայդի Թալիավինին և այն բաղկացած էր 16 փորձագետներից և 24 երկարաժամկետ դիտորդներից, ովքեր տեղակայված էին Երևանում և հանրապետության 10 մարզերում: ԸԴԱ-ի անդամները ներկայացնում են 21 ԵԱՀԿ մասնակից պետություններ:

Քվեարկության օրը ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն համատեղել է ջանքերը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ)

պատվիրակությունների հետ՝ Միջազգային ընտրությունների դիտորդական առաքելություն (ՄԸԴԱ) կազմելու նպատակով: Ընդհանուր առմամբ, քվեարկության օրը տեղաբաշխվել են ԵԱՀԿ 36 մասնակից և մեկ ԵԱՀԿ Գործընկեր հանուն համագործակցության երկրներ ներկայացնող 289 կարճաժամկետ դիտորդներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատել է ընտրական գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների համար ամրագրված այլ չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Սույն վերջնական զեկույցը հաջորդում է 2013թ. փետրվարի 19-ի մամլո ասուլիսին հրապարակված Նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին հայտարարությանը և Հետընտրական միջանկյալ զեկույցին:[2]

ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ընտրությունները դիտարկելու հրավերի համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ (ԿԸՀ)՝ իր համագործակցության և հավաստագրման փաստաթղթեր տրամադրելու և Արտաքին գործերի նախարարությանը՝ համագործակցության և աջակցության համար: ԸԴԱ-ն նաև ցանկանում է շնորհակալություն հայտնել այլ ազգային և տեղական պետական հաստատություններին, ընտրական մարմիններիին, թեկնածուներին, քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ իրենց համագործակցության համար, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակին, ԵԱՀԿ Մասնակից և Համագործակցության համար գործընկերներ երկրների դեսպանությունների և միջազգային կազմակերպույուններին՝ իրենց աջակցության համար:

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2008 թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած վերջին նախագահական ընտրություններում հաղթել էր Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) թեկնածու Սերժ Սարգսյանը՝ ստանալով քվեների 52.8 տոկոսը: Սարգսյանի հիմնական մրցակիցը՝ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել էր քվեների 21.5 տոկոսը: Ընտրությունների արդյունքները բողոքարկվել են, և Տեր-Պետրոսյանի կողմնակիցները կազմակերպել են բողոքի ցույցեր: Ոստիկանության և ցուցարարների բախումների արդյունքում տաս մարդ զոհվել են և մոտ 200 մարդ վիրավորվել:

Վերջին խորհրդարանական ընտրությունները կայացել են 2012 թ. մայիսին: Իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացել է 131 պատգամավորական մանդատից 69-ը: Ազգային ժողովում ներկայացված այլ կուսակցություններն են՝ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ, 37 մանդատ), Հայ ազգային կոնգրես դաշինքը (ՀԱԿ, 7 մանդատ), Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ, 6 մանդատ), Հայ յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ, 6 մանդատ) և Ժառանգություն կուսակցությունը

[2] Սույն զեկույցները, ինչպես նաև Հայաստանի վերաբերյալ նախորդ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ զեկույցները տես՝ http://www.osce.org/odihr/elections/armenia

(5 մանդատ): Հայաստանի Հանրապետական և Օրինաց երկիր կուսակցությունները կազմում են ներկայիս կոալիցիոն կառավարությունը:

IV. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Նախագահը ընտրվում է բացարձակ մեծամասնական ընտրակարգով՝ հինգ տարի ժամկետով: Առաջին փուլում Հանրապետության Նախագահ ընտրվում է այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի բացարձակ մեծամասնությունը: Այլապես, առաջին փուլից երկու շաբաթ անց անցկացվում է նախագահի ընտրությունների երկրորդ փուլ, որին մասնակցում են այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում ձայների առավելագույն քանակը ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:

Այս ընտրությունները առաջին նախագահական ընտրություններն են, որոնք անցկացվել են 2011 թ. մայիսին ընդունված նոր Ընտրական օրենսգրքի համաձայն:[3] Նոր Օրենսգիրքը անդրադառնում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) կողմից նախկինում արված մի շարք առաջարկությունների և գնահատվել է որպես համապարփակ և ժողովրդավարական ընտրությունների անցկացման հաստատուն հիմք:[4] Բարելավվել է, ի թիվս այլոց, ընտրական ցուցակների մատչելիությունը, ընտրական հանձնաժողովներում գենդերային չափանիշի ներմուծումը, ինչպես նաև քարոզչության ավելի թափանցիկ ֆինանսավորումը: Միաժամանակ, որոշ թերություններ դեռևս առկա են, այդ թվում՝ հեշտությամբ թեկնածուին գրանցումից հանելու գործընթացը, պետական և կուսակցական համակարգերի ոչ բավարար բաժանումը, տեղական դիտորդների հավատարմագրման համար ավելորդ խոչընդոտները, բողոքների և դիմումների ոչ արդյունավետ ընթացակարգը:[5]

Մասնավորապես, քարոզարշավի կանոնակարգումները, հատկապես քարոզարշավի ֆինանսավորման դրույթները, ոչ միշտ էին մեկնաբանվում կամ պատշաճ կերպով

---

[3] Ընտրություններին առնչվող օրենսդրական այլ փաստաթղթերի շարքում են Սահմանադրությունը (վերջին անգամ փոփոխված 2005 թ.), Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը (վերջին անգամ փոփոխված 2012 թ.) և Հավաքների ազատության մասին նոր օրենքը (2011 թ.). 2011 թվականին փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների օրենսգրքում և Քրեական օրենսգրքում, ըստ որի բարձրացվել են ընտրությունների ժամանակ կատարված իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը և ազատազրկման ժամկետները, ինչպես նաև սահմանվել են ընտրությունների հետ կապված լրացուցիչ իրավախախտումներ:

[4] Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը 2011 թ. Ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ կարծիք են հրապարակել, տես՝ http://www.osce.org/odihr/elections/84269

[5] ԵԱՀԿ ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի վերաբերյալ և 2012 թվականին կայացած խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցը, տես՝ http://www.osce.org/odihr/91643

իրականացվում իշխանությունների և մրցակիցների կողմից: առումով: Այս հանգամանքը տվել է վարչական ռեսուրսները չարաշահելու հնարավորություն և չի երաշխավորել "խաղի" հավասար կանոններ թեկնածուների միջև կամ չի պաշտպանել ընտրողներին անտեղի ազդեցությունից: Բացի այդ, Քրեական օրենսգիրքը չի ներառում քարոզչության ժամանակ պաշտոնական դիրքի կամ պետական միջոցների չարաշահման դեպքերի համար հատուկ հանցագործություններ: Այս գործոնները տվել են գործող նախագահին չափից դուրս առավելություն քարոզարշավի ընթացքում:

Ընտրական օրենսդրությունը համալրվել է ԿՀԸ-ի որոշումներով և իրավական դրույթների պարզաբանումներով: Երբեմն, ԿԸՀ- ն տրամադրել է չափազանց նեղ մեկնաբանություններ իրավական դրույթների վերաբերյալ, կամ չի տրամադրել պարզաբանումներ ընդհանրապես:

Ընտրական հանձնաժողովները, իրավապահ մարմինները և դատարանները պետք է մեկնաբանեն, կիրառեն և ի կատար ածեն ընտրական օրենսդրությունը՝ հաշվի առնելով օրենքի ոգին և նպատակը, որը նպատակ ունի մրցակիցներին հավասար մրցակցային դաշտ, ընտրողների խոսքի ազատությունն և ընտրական գործընթացների ամբողջականությունն ապահովել:

Սահմանադրությունը երաշխավորում է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ հիմնարար իրավունքները և ազատությունները: 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջներն և ընտրական գրավը, որը թեկնածուները պարտավոր են վճարել գրանցվելու համար, ավելի քան խիստ են:[6] Բոլոր դատապարտյալներին՝ անկախ գործած հանցագործության ծանրությունից, ընտրելու իրավունքից զրկելը հակասում է համընդհանուր ընտրական իրավունքին և այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:[7]

---

[6] Վենետիկի հանձնաժողովի «Դրական ընտրական փորձի» կանոններ, 1.1.c, տես՝ http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2002)023rev-e.aspx, և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի Համատեղ կարծիքը 2011թ. Ընտրական օրենսգրքի վերաբերյալ, մաս 37: Տես նաև ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ՀՀ Ընտրական օրենսգրքի վերաբերյալ Համատեղ կարծիքի 36-րդ և 37-րդ պարբերությունները, որոնք սահմանում են, որ «ընտրական գրավի չափը պետք է զգուշորեն քննարկել, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու պետք է տրված լինի թեկնածու դառնալու խելամիտ հնարավորություն»:

[7] 1990 ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.3 պարբերությունը սահմանում է, որ մասնակից երկրները «կերաշխավորեն ընդհանուր և հավասար ընտրական իրավունք բոլոր չափահաս քաղաքացիների համար», մինչդեռ 24 պարբերությունը նախատեսում է, որ իրավունքների և ազատությունների սահմանափակումը պետք է «խիստ համապատասխանի օրենքով սահմանված կարգին»: ՄԱԿԻ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված Ընդհանուր մեկնաբանության (1966) 14-րդ պարբերությունը սահմանում է, որ ընտրական իրավունքների սահմանափակումները պետք է լինեն «օբյեկտիվ և ողջամիտ», տես՝ http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/%28Symbol%29/bb722416a295f264c12563ed0049dfbd?Opendocument: Վենետիկյան հանձնաժողովի «Դրական ընտրական փորձի» կանոնները սահմանում են, որ ընտրական իրավունքից զրկումը պետք է հիմնված լինի «ծանր հանցագործության համար քրեական դատապարտման» վրա և առաջարկում է, որ «քաղաքական իրավունքների բացառումը պետք է կատարվի միայն դատարանի հստակ վճռով», տես՝ Մարդու իրավունքների եվրոպական

Ընտրական օրենսգրքի դրույթը, որը զրկում է բոլոր դատապարտյալներին ընտրելու իրավունքից, անկախ նրանց կողմից կատարված հանցագործությունների ծանրության աստիճանի, պետք է փոփոխվի:

Խորհրդարանական ընտրություններից հետո Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է կառավարության ներկայացուցիչներից և այլ պետական պաշտոնյաներից բաղկացած աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է ուսումնասիրել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցում, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները և պատրաստել գործողությունների ծրագիր՝ նշված առաջարկություններն իրականացնելու համար: 2012 թվականի հոկտեմբերին աշխատանքային խմբի գործունեության արդյունքները ներկայացվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, որում առաջարկվել է զերծ մնալ օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ կատարելուց առաջիկա ընտրությունների նախաշեմին, դրական ընտրական փորձի համաձայն:[8]

Նախորդ և ներկա առաջարկություններին անդրադառնալու նպատակով, իշխանություններին խրախուսվում է սկսել նախապատրաստել անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները՝ հանրային խորհրդակցական գործընթացի միջոցով՝ բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի, այդ թվում, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ:

V. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընտրական գործընթացները կազմակերպվել էին ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգով, որը ներառում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (ԸԸՀ) և 1,988 Տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ):[9]

Ներկա ԿԸՀ-ի յոթ անդամը նշանակվել են Հանրապետության Նախագահի կողմից 2011 թ.՝ Մարդու իրավունքների պաշտպանի (երեք անդամ), Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի (երկու անդամ յուրաքանչյուրը) առաջարկությամբ:

ԸԸՀ-ները մշտական գործող մարմիններ են, որոնց անդամները նշանակվել են 2011 թվականի օգոստոսին ԿԸՀ-ի կողմից՝ ԸԸՀ անդամության համար ինքնաառաջադրված

դատարանի Հիրթսը ընդդեմ Մեծ Բրիտանիայի No. 74025/01 (6 հոկտեմբեր 2005), հասանելի է՝ http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-70442

8 Տես՝ Վենետիկյան հանձնաժողովի «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» II.2.բ պարբերությունը, որը սահմանում է, որ «ընտրական օրենքի հիմնական սկզբունքները, մասնավորապես ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների անդամակցությունը և ընտրատարածքների սահմանագծումը, չպետք է փոփոխության ենթակա լինեն ընտրություններից առաջ առնվազն մեկ տարվա ընթացքում, կամ պետք է սահմանված լինեն սահմանադրությամբ կամ սովորական օրենքից ավել իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով»:

9 Ընտրական տեղամասը կարող է ունենալ մինչև առավելագույնը 2,000 ընտրող:

քաղաքացիներից: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է գենդերային քվոտա ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի կազմի համար, որը պահանջում է, որ հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից: ԿԸՀ-ի ներկա անդամներից երեքը և ԸԸՀ-ի անդամների 33.5 տոկոսը և ԸԸՀ-ների նախագահների 10 տոկոսը կանայք են:

ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի նախագահները, տեղակալները և քարտուղարները ընտրվել են հանձնաժողովի անդամների կողմից իրենց կազմից: ԸԸՀ-ները և ՏԸՀ-ները հիմնականում լավ կահավորված էին, թեև ինչպես ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներն են նշել, որ իրենց այցերի ժամանակ որոշ դեպքերում նրանց տարածքները եղել են չափից դուրս փոքր կամ անհարմար:[10]

Բոլոր ՏԸՀ-ները ձևավորվել են մինչև հունվարի 24-ը՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: ԸԸՀ-ները նշանակել են երկու անդամ իրենց ընդդատություն տակ գտնվող յուրաքանչյուր ՏԸՀ-ում:Ազգային Ժողովում պատգամավորական մանդատներ ունեցող հինգ քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը և մեկ դաշինքը կարող էին նշանակել յուաքանչյուր ՏԸՀ-ի մեկական անդամ: ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՕԵԿ-ը առաջադրել են անդամներ բոլոր ՏԸՀ-ներում, մինչդեռ ՀԱԿ-ը, Ժառանգությունը և ՀՅԴ-ն չեն լրացրել իրենց տրված թափուր տեղերը 457, 65 և 51 ՏԸՀ-ներում համապատասխանաբար:[11] Ըստ օրենքով սահմանված դրույթների, համապատասխան ԸԸՀ-ների նախագահները լրացրել են թափուր տեղերը, ներառյալ շուրջ 70 թափուր տեղեր, որոնք ի հայտ են եկել այն բանից հետո, երբ քաղաքական կուսակցությունները չեն կարողացել հրաժարական տված ՏԸՀ անդամների փոխարեն ընտրել նոր անդամների: ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների պաշտոնները բաժանվել են ԿԸՀ-ի կողմից հունվարի 15-ին՝ Ազգային Ժողովում պատգամավորական մանդատներ ունեցող կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչների միջև՝ նրանց մանդատների համապատասխան: ՏՀԸ անդամների 48 տոկոսը, ինչպես նաև այցելացած տեղամասերի նախագահների 32 տոկոսը՝ կանայք էին:

ԿԸՀ-ն աշխատել է բաց և թափանցիկ՝ տրամադրելով իր նիստերի վերաբերյալ տեղեկատվություն և մուտք ապահովելով թեկնածուներին, թեկնածուների վստահված անձանց, դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Փետրվարի 1-ից ԿԸՀ-ի նիստերը նաև հեռարձակվել են ուղիղ եթերով ԿԸՀ-ի կայքում: Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, ԿԸՀ-ն հեռուստատեսությամբ հեռարձակել է ընտրողների իրազեկմանն ուղղված տեսահոլովակներ, ինչպես նաև պատրաստել է տեղեկատվական նյութեր ընտրական գործընթացի տարբեր հարցերի շուրջ, այդ թվում նաև սահմանափակ կարողություններով անձանց համար:

---

[10] ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են, որ թիվ 14, 16, 21, 33 և 39 ԸԸՀ-ների փոքր տարածքները խնդիրներ են առաջացրել ընտրությունների արդյունքների աղյուսակավորման ժամանակ:

[11] ՏԸՀ-ներում իրենց տեղերը չլրացրած կուսակցությունները որպես պատճառ են նշել հետաքրքրության պակասը, քանի որ իրենք թեկնածու չեն առաջադրել, միջոցների և որոշ համայնքներում ապրող իրենց աջակիցների բացակայությունը, ինչպես նաև իրենց կողմից այսպես ասած «անարդար ընտություններին» մասնակցելու ցանկության բացակայությունը:

ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները անցկացրել են ընտրությունների վարչարարական նախապատրաստումը ըստ օրենքով սահմանված վերջնաժամկետների և արհեստավարժորեն: ԿԸՀ-ն հաստատել է հիմնական ընթացակարգային կանոնները և ուղեցուցը, այդ թվում ընտրությունների օրը ընտրողների անձնագրերը դրոշմակնքելը և դարձրել է դրանք հասանելի՝ տեղադրելով իր կայքում ընտրություններից բավական ժամանակ առաջ:[12] Այն հարցը, թե արդյոք թեկնածուները կարող են տրամադրել անվճար փոխադրամիջոցներ ընտրողներին ընտրությունների օրը, չի քննարկվել ԿՀԸ-ի կողմից, այնուամենայնիվ այն ի հայտ չի եկել ընտրությունների օրը: ԿԸՀ-ն նաև չի պարզաբանել այն կանոնները, ըստ որոնց այն թեկնածուները, ովքեր ինքնաբացարկ են հայտնել պարտավոր էին փոխհատուցել իրենց նախընտրական քարոզարշավի ընթացքում պետության կողմից կատարված անվճար հեռարձակման եթերաժամի ծախսերը: [13] Դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամների համար ԿԸՀ-ն կազմակերպել է քվեարկություն համացանցի միջոցով:[14]

Ընտրություններին առնչվող օրենսդրության միատեսակ կիրառումն ապահովող միջոցները պետք է ուժեղացվեն: Այն ներառում է անհրաժեշտ որոշումներ և պարզաբանումներ ճիշտ ժամանակին ընդունելու ԿԸՀ-ի լիազորությունների ընդլայնում, որոնց կիրառումը պարտադիր կլինի բոլոր շահագրգիռ կողմերի համար: ԿԸՀ-ն պետք է երաշխավորի, որ ընդունում է բոլոր անհրաժեշտ որոշումներն ու պարզաբանումները և, որ դրանք համահունչ են օրենքի տառին և ոգուն:

Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ ԿԸՀ-ն կազմակերպել է դասընթացներ ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների անդամների համար, այդ թվում բողոքների ընթացակարգերի վերաբերյալ: ՏԸՀ-ների մասնագիտական դասընթացները կազմակերպվել են բոլոր մարզերում և դրական են գնահատվել ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդների կողմից:

ԿԸՀ-ն պետք է շարունակի կազմակերպել դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամների համար, այդ թվում ընտրական ընթացակարգերի վերաբերյալ, հատուկ ուշադրություն դարձնելով հաշվարկի և աղյուսակավորման ընթացակարգերին:

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ընտրողների գրանցումը պասիվ է և կազմվում է բնակչության պետական ռեգիստրի հիման վրա: Ոստիկանության Անձնագրերի և Վիզաների Վարչությունը

---

12 Ընտրողների անձնագրերը կնքվել են հատուկ կնիքով, որպես բազմակի քվեարկության դեմ լրացուցիչ երաշխիք, և կնիքը պետք է տեսանելի լիներ առնվազն 12 ժամ:

13 Ընտրական օրենսգրքի 87.5 հոդվածը պարտավորեցնում է ընտրություններում ինքնաբացարկ հայտնած թեկնածուներին փոխհատուցել իրենց քարոզարշավի համար ծախսված ցանկացաց պետական միջոց, սակայն այն չի սահմանում փոխհատուցման ընթացակարգերը կամ պայմանները:

14 Այս խմբին պատկանող 243 ընտրողներից 228-ը քվեարկել են էլեկտրոնային եղանակով:

պատասխանատու է ընտրողների համապետական էլեկտրոնային ռեգիստրի մշտական վարման համար:[15]
Հունվարի 8-ին օրենքով սահմանված կարգով, թափանցիկությանը նպաստելու և ընտրողների գրանցման վերաբերյալ հանրության վստահությունը բարձրացնելու նպատակով ընտրողների ռեգիստրի թվային և որոնման համակարգով հագեցած տարբերակը տեղադրվել է ԿԸՀ-ի կայքում: ԿԸՀ-ն ներկայացրել է ընտրողների ռեգիստրի որոնման համակարգի նոր հնարավորություն, որի շնորհիվ ընտրողները կարող են ստուգել ինչպես իրենց անձնական, այնպես էլ նույն հասցեում գրանցված մյուս ընտրողների տվյալները:

Ընտրացուցակները կազմվել են ընտրողների ռեգիստրի հիման վրա և յուրաքանչյուր տեղամասի համար՝ քաղաքացիների բնակության վայրի համաձայն: Ընտրողների նախնական ցուցակները ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են ԱՎՎ-ի կայքում ներբեռնման հնարավորությամբ, ինչպես նաև փակցվել են համապատասխան ընտրական տեղամասերում: Քաղաքացիները կարող են դիմել հանրապետության ողջ տարածքում գործող 61 ԱՎՎ գրասենյակներ՝ ընտրողների ցուցակներում անճշտություններն (այդ թվում այլ ընտրողների տվյալները) ուղղելու համար: Ընտրացուցակների վերջնական տարբերակը երկու տարբերակով հրապարակվել են փետրվարի 16-ին: Համաձայն ԿԸՀ-ի տվյալների, 2,529,016 քաղաքացիներ իրավունք են ունեցել քվեարկելու ընտրությունների օրը:

Այն ընտրողները, որոնք ցանկացել են քվեարկել համայնքներում, որտեղ մշտապես չեն բնակվել, ոչ ուշ, քան ընտրություններից յոթ օր առաջ հնարավորություն են ունեցել դիմել ԱՎՎ՝ իրենց տվյալները ժամանակավորապես համապատասխան ընտրողների ցուցակ տեղափոխելու համար: Նույն վերջնաժամկետների սահմաններում, Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողները քվեարկությանը մասնակցելու համար կարող էին ներկայացնել դիմում՝ ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Ընտրական հատուկ ցուցակներ են կազմվել զիմվորական անձնակազմի, կալանավայրերում նախնական կալանքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության աշխատակազմի համար, որոնք հեռու են գտնվում իրենց բնակության վայրից:

Ոստիկանությունը գործարկել է «թեժ գիծ և ԿԸՀ-ի հետ համատեղ լրատվամիջոցներով իրականացրել է ընտրողների իրազեկում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից այցելած ընտրատեղամասերից շատերում փակցված են եղել ընտրողների իրազեկմանն ուղղված պաստառներ՝ ընտրացուցակներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ: Ոստիկանությունը կազմակերպել է «դռնեդուռ» ստուգումներ՝ հայտնաբերելու մեծ թվով գրանցված ընտրողների հասցեները, քանդված շինությունները, որտեղ քաղաքացիները դեռ գրանցված են, ինչպես նաև սխալ հասցեները:[16] ԱՎՎ-ն

[15] ԱՎՎ-ն թարմացնում է ընտրողների ռեգիստրը ամեն տարվա հունիսին և նոյեմբերին և ներկայացնում այն ԿԸՀ-ին:

[16] Ոստիկանությունը հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այլևս հնարավոր չէ քաղաքացիներին գրանցել ոչ պատշաճ տարածքներում կամ քանդված շենքերում: Ըստ ոստիկանության սխալ

հրապարակել է ամսեկան տեղեկագրեր իր աշխատանքների մասին և բարձրացրել ընտրողների իրազեկությունը՝ բնակչության պետական ռեգիստրում (ԲՊՌ) տվյալների ճշգրտման կապակցությամբ: Ընտրացուցակների և ԲՊՌ-ի որակը բարելավելու նպատակով ԱՎՎ-ն ձեռնարկել է հատուկ միջոցներ:

Թեև իշխանությունները լուրջ ջանքեր էին գործադրել ընտրողների ռեգիստրը բարելավելու համար, նրանց չի հաջողվել բացառել համընդհանուր անվստահությունը ընտրողների գրանցման գործընթացի ամբողջականության վերաբերյալ: Քարոզարշավի ընթացքում որոշ թեկնածուներ լրատվամիջոցներով բարձրաձայնել են իրենց մտահոգությունները ընտրացուցակների կապակցությամբ: Նրանք պնդել են, որ գրանցված ընտրողների թիվը չափազանց ուռճացված էր և կարող էր օգտագործվել երկրից դուրս գտնվող ընտրողների փոխարեն քվեարկելու համար, այնուամենայնիվ նրանք չեն տրամադրել որևէ ապացույց իրենց տեսակետը պաշտպանելու համար:[17]

Ընտրողների գրանցման ամբողջականության նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով, ազգային շահառուները, ներառյալ իշխանությունները, քաղաքական կուսակցությունները, թեկնածուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, պետք է ներգրավվեն հանրային քննարկումների և որոշումների կայացման ընդգրկուն գործընթացների մեջ՝ ընտրողների գրանցման առանձնահատուկ և վիճարկելի հարցերին պատասխաններ տալու համար (այդ թվում, արտասահմանում բնակվող ընտրողների գրանցումը, ընտրողների ստորագրված ցուցակները հրապարակային կամ այլ կերպ մատչելի դարձնել):

Ընտրությունների օրը ընտրողների գրանցումը հնարավոր է եղել ԱՎՎ-ի կողմից տեղեկանքի կամ դատարանի վճիռների հիման վրա: 215 ընտրող օգտվել է նման հնարավորությունից: Բացի այդ, ընտրությունների օրը, ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են 29 դեպքերի մասին, երբ ընտրողներին զրկել են ընտրելու իրավունքից քանի, որ չեն կարողացել գտնել նրանց անունները համապատասխան ընտրացուցակներում: [18]

Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակներում ներդրվել է մեկնարկային էլեկտրոնային ներցանցային համակարգ, որը ինքնաբերաբար փոխանցում է տվյալների թարմացումները բնակչության պետական ու ընտրողների ռեգիստրներներ: ԱՎՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ չնայած համակարգը դեռ հետագա տեխնիկական բարելավման կարիք ունի, այն ապահովել է ճշգրտված ծանուցում և տվյալների փոխանակման մեխանիզմ:

հասցեներում մարդկանց գրանցման խնդիրը պետք է լուծվի նոր սեփականության գրանցման համակարգի միջոցով: Սեփականություն գրանցելու համար քաղաքացիները պետք է նախապես ձեռք բերեն թույլտվություն Պետական կադաստրի գրասենյակից, որը նախքան սեփականության գրանցումը ստուգում է այն (Կառավարության թիվ 1231-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելուց հետո:

17 Որոշ քաղաքական կուսակցություններ (ՀԱԿ և Ազգային ինքնորոշման միություն) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ևս բարձրաձայնել են ընտրական ցուցակների ճշտության և դրանց հնարավոր չարաշահումների վերաբերյալ իրենց մտահոգությունները:

18 «Ընտրությունը քոնն է» և «Կարողություններ և զարգացում հանուն քաղաքացիական հասարակության» տեղական դիտորդական կազմակերպությունները ևս զեկուցելլ են նման դեպքերի մասին:

Հարկավոր է շարունակել ջանքեր գործադրել՝ ընտրողների ցուցակների ճշտությունը բարելավելու նպատակով: Տարբեր պետական մարմինների միջև պետք է ստեղծվի ծանուցման արդյունավետ համակարգ՝ տեղեկատվության փոխանակումը ավելի դյուրին դարձնելու և ընտրողների ռեգիստրում և ընտրողների ցուցակներում ժամանակին ուղղումներ կատարելու հնարավորություն ընձեռելու համար:

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Նախագահական ընտրվելու համար անձը պետք է ունենա ընտրելու իրավունք, լինի 35 տարեկանը լրացած, չունենա այլ երկրի քաղաքացիություն, լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի և վերջին 10 տարվա ընթացքում մշտապես բնակվի Հայաստանում:

Թեկնածուները կարող են առաջադրվել քաղաքական կուսակցությունների կողմից կամ ինքնաառաջադրվել: Թեկնածուների առաջադրումը տեղի է ունեցել 2012 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2013 թվականի հունվարի 4-ը, որին հետևել է 10-օրյա ժամանակահատված՝ նախատեսված թեկնածուների գրանցման համար: Հավանական թեկնածուները պետք է ներկայացնեին ԿԸՀ-ին դիմում[19]՝ անձնական տվյալներով, ինչպես նաև ընտրագրավի վճարման անդորրագիրը, որը կազմում է 8 միլիոն դրամ (մոտ 15,000 եվրո) [20] : Հավանական թեկնածուներն ունեն լրացուցիչ 48 ժամանիրաժեշտ փաստաթղթերը ամբողջականացնելու համար, եթե նման պահանջ է ներկայացվել ԿԸՀ կողմից:[21]

Օրենքը թույլ է տալիս ԿԸՀ-ի դիմումի հիման վրա դատարանի որոշմամբ թեկնածուի գրանցումը անվավեր ճանաչել՝ քարոզարշավի կամ քարոզարարշավի ֆինանսավորման պահանջները խախտելու պատճառով:

Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝թույլատրելով թեկնածուի գրանցման անվավեր ճանաչումը միայն բացառիկ դեպքերում, որոնք պետք է հստակ և սպառիչ կերպով սահմանվեն Ընտրական օրենսգրքում:

Թեկնածուների գրանցումը եղել է ընդգրկուն: Օրենքով սահմանված ժամկետների սահմաններում 15 առաջադրման դիմումներ են ներկայացվել ԿԸՀ: Մեկ առաջադրված նախագահի թեկնածու ինքնաբացարկ է հայտնել, և վեցը չեն գրանցվել ընտրական գրավը

---

19 Դիմումին կից առաջադրված թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ կից փաստաթղթերը՝ թեկնածության առաջադրման մասին կուսակցության համաժողովի կամ մշտական գործադիր մարմնի որոշումը, կուսակցության կանոնադրությունը, կուսակցության կողմից առաջադրվելու վերաբերյալ գրավոր համաձայնություն, անձը հաստատող փաստաթղթի պատճեն, առնվազն տաս տարվա քաղաքացիության և մշտական բնակության հավաստում և թեկնածուի լիազոր անձի անձնական տվյալները: Առաջին երեք փաստաթղթերը պետք է ներկայացվեն միայն կուսակցության կողմից առաջադրվողների կողմից:

20 Ձայների հինգ տոկոսից պակաս ստացած թեկնածուների ընտրական գրավը չի վերադարձվում:

21 Ըստ օրենքի գրանցումը կարող է մերժվել, եթե ներկայացվաշ փաստաթղթերը ամբողջական չեն կամ կեղծված են:

չվճարելու պատճառով, այդ թվում միակ կին թեկնածուն: ԿԸՀ-ն գրանցել է ութ թեկնածուների, որոնք ներկայացրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը և վճարել են ընտրական գրավը:[22] Փետրվարի 8-ին թեկնածուներից մեկը՝ Արամ Հարությունյանը ինքնաբացարկ է հայտնել, հույս հայտնելով, որ բոլոր թեկնածուները, բացի գործող նախագահից, ինքնաբացարկ կհայտնեն, այս կերպ դարձնելով ընտրությունները ոչ օրինական:

Երեք առաջադրված անձանց ԱՎՎ չի տրամադրել պահանջվող մշտական բնակության տեղեկանք: Ընտրական օրենսգիրքը չի սահմանում թե ինչպես է տաս տարվա մշտական բնակության ժամանակահատվածը հաշվարկվում: ԱՎՎ-ն հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այն տրամադրել է տաս տարվա մշտական բնակության տեղեկանքը միայն այն թեկնածուներին, ովքեր վերջին տաս տարվա ընթացքում չեն բացակայել Հայաստանից շարունակաբար վեց ամսից ավել : Սա ամրագրված է ՀՀ Բնակչության Պետական Ռեգիստրի մասին Օրենքի 7-րդ հոդվածում, [23] և կարող է համարվել չափից դուրս սահմանափակող, քանի որ հակասում է միջազգային չափանիշներին և դրական ընտրական փորձի:[24]

Թեկնածուների առաջադրման համար սահմանված 10 տարվա քաղաքացիության և մշտապես բնակության պահանջներն ավելի քան խիստ են և անհրաժեշտ է անդրադառնալ այդ խնդրին: Առնվազն, օրենքը պետք է հստակեցնի բնակության պահանջը այնպես, որ այն համընկնի մշտական բնակության վայրի հետ, համաձայն դրական ընտրական փորձի և սահմանի թափանցիկ և օբյեկտիվ ընթացակարգեր՝ որոշելու, արդյոք այդ պահանջը բավարարված է: Բնակության պահանջի սահմանումը չպետք է լինի չափազանց սահմանափակող:

VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նախընտրական քարոզչությունը պաշտոնապես մեկնարկել է թեկնածուների գրանցումի ավարտից մեկ շաբաթ անց (Հունվարի 21-ին) և ավարտվել ընտրություններից երկու օր

---

22 Գրանցված թեկնածուներն են եղել պարոնայք Հրանտ Բագրատյանը, Անդրեաս Ղուկասյանը, Արամ Հարությունյանը, Պարույր Հայրիկյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Արման Մելիքյանը, Մերժ Սարգսյանը և Վարդան Մեղրակյանը:

23 «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7.2 հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության համապատասխան հյուպատոսական ծառայությանը կամ դիվանագիտական ներկայացուցչությանը:»

24 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրական իրավունքներից զրկելու հիմքերը պետք է լինեն «օբյեկտիվ և հիմնավոր», տես նաև ՔՔԻՄԴ 15-րդ հոդվածը: Վենետիկյան հանձնաժողովի «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձը» (1.1.c.ii և iv) սահմանում է, որ «բնակության պահանջը չպետք է գերազանցի վեց ամիսը, ավելի երկար բնակության պահանջ կարող է պահանջվել միայն ազգային փոքրամասնությունների պաշտպանության համար» և «բնակությունը այս պարագայում նշանակում է մշտական բնակություն»

առաջ՝ կեսգիշերին (Փետրվարի16-ին): Ընտրական օրենսգիրքը թույլատրում է կատարել քարոզչություն քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ:
Սակայն, քարոզարշավի դրույթները, որոնք նպատակ ունեն ստեղծել հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար, կիրառվում են միմիայն պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում, այսինքն՝ ոչ այն շաբաթվա ընթացքում, որը հաջորդում է թեկնածուների գրանցման ավարտին:

Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ սահմանելով, որ նախընտրական քարոզարշավը պաշտոնապես մեկնարկի ամենաուշը թեկնածուների գրանցման վերջնաժամկետի հաջորդ օրը, որպեսզի քարոզարշավի կանոնակարգումները կիրառվեն:

Քարոզարշավը անցկացվել է ԲՀԿ, ՀԱԿ և ՀՅԴ թեկնածու չառաջադրելու որոշման պայմաններում: [25] Ութ թեկնածուներից միայն գործող նախագահն է առաջադրվել խորհրդարանական կուսակցության կողմից:[26]

Քարոզարշավից առաջ և ընթացքում, մրցակիցները ակտիվորեն օգտվել են առցանց լրատվամիջոցներից և սոցիալական ցանցերից, մասնավորապես Facebook-ից: Այլպես, քարոզարշավը զուսպ էր: Ի տարբերություն գործող նախագահի քարոզարշավը, , ամենանկատելին էր և ընդգրկել էր մի շարք հանրահավաքներ և փակ տարածքներում միջոցառումներ երկրի ողջ տարածքում: [27] Մյուս թեկնածուներից չորսը նույպես անցկացրել են քարոզչություն մարզերում: Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանը հայտարարել էր հացադուլ ամբողջ քարոզարշավի ընթացքում՝ պահանջելով գործող նախագահի թեկնածությունը անվավեր ճանաչել:[28]

Հունվարի 31-ին նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանը ստացել էր հրազենային վնասվածք: Փետրվարի 7-ին երկու կասկածյալներ ձերբակալվել էին, իսկ Մարտի 5-ին թեկնածու Վարդան Սեդրակյանը նույնպես ձերբակալվել էր որպես կասկածյալ՝ հրազենային հարձակման մեջ ընդգրկված լինելու համար: [29] Չնայած փետրվարի 5-ին պարոն Հայրիկյանը հայտարարել էր, որ չի դիմելու Սահմանադրական դատարան ընտրությունները հետաձգելու նպատակով, սակայն փետրվարի 10-ին ներկայացրել էր դիմում, որը հետ էր վերցրել հաջորդ օրը:

---

25 ՀԱԿ-ը թեկնածու չի առաջադրել, այն բանից հետո, երբ պարոն Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ ինքը չի մասնակցի ընտրություններին իր տարիքի, ֆինանսական միջոցների և ընտրական գործընթացների նկատմամբ վստահության բացակայության պատճառով:

26 Կուսակցության կողմից առաջադրված մեկ այլ թեկնածու եղել է պարոն Բագրատյանը (Ազատություն կուսակցություն): Պարոն Հովհաննիսյանը (Ժառանգություն) և պարոն Հայրիկյանը (ԱՅԻՄ) իրենց համապատասխան կուսակցությունների առաջնորդներն են, սակայն ինքնաառաջադրվել են: Մյուս չորս թեկնածուները ևս ինքնաառաջադրվել էին:

27 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից դիտարկված 57 հանրահավաքներից 36-ը կազմակերպվել են գործող նախագահին սատարելու համար: Հանրահավաքներին մասնակցածներից մոտ 40 տոկոսը կանայք են եղել:

28 Պարոն Ղուկասյանը նաև նամակ է ուղարկել մյուս թեկնածուներին՝ կոչ անելով նրանց միասնական կերպով ինքնաբացարկ հայտնել:

29 Փետրվարի 12-ին մամլո ասուլիսի ժամանակ պարոն Սեդրակյանը մտավախություն է հայտնել, որ ընտրությունների օրից հետո իր դեմ կարող են մեղադրանքներ ներկայացվեն հարձակման հետ կապված՝ մերժելով պարոն Հայրիկյնի վրա կատարված հարձակման հետ իր կապը:

Բացի գործող նախագահից, բոլոր թեկնածուները և մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ մտահոգություններ են արտահայտել ընտրական գործընթացի ամբողջականության և վարչական ռեսուրսի չարաշահման կապակցությամբ:[30]

Թեև Ընտրական օրենսգիրքը նախատեսում է կանոններ՝ նպատակաուղղված թեկնածուների համար հավասար հնարավորություններ ապահովելու, քարոզարշավի որոշ կանոնակարգումներ և դրանց կատարումը չեն ապահովել բավարար պաշտպանություն վարչական ռեսուրսի չարաշահումից:

Քարոզարշավի ընթացքում ընդհանու առմամբ պահպանվել են հիմնարար ազատությունները , և մրցակիցները կարողացել են անխոչընդոտ իրականացնել իրենց քարոզչությունը, սակայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատել է հանրային կառավարման անկողմնակալության բացակայություն և վարչական ռեսուրսի չարաշահում գործող նախագահի օգտին:[31] Այս փաստը կասկածի տակ է դնում պետության և քաղաքական կուսակցության բաժանման հարցը՝ ամրագրված 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերությամբ:[32]

Իշխանությունները պետք է ապահովեն, որ պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ բաժանման համար երաշխիքներ են մշակված և իրականացվում, ինչպես ամրագրված է 1990թ. ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերության մեջ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները դիտարկել է ընտրողների նկատմամբ ահաբեկման և ճնշման դեպքեր, այդ թվում՝ վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու և

---

30 Ընտրությունների օրից հետո 19 ՀԿ-ներ իրենց անվստահությունն են հայտնել ընտրական գործընթացների նկատմամբ և պահանջել են, որ ստորագրված ընտրողների ցուցակները հրապարակվեն: Վերջնական արդյունքների հրապարակումից հետո մի քանի օր շարունակ Երևանում և Գյումրիում ուսանողները բողոքի ցույցեր են կազմակերպել: Պարոն Բագրատյանը, պարոն Հայրիկյանը և պարոն Հովհաննիսյանը հունվարի 28ին հրապարակել են համատեղ հայտարարություն՝ կոչ անելով բոլոր թեկնածուների համար ստեղծել ազնիվ և հավասար պայմաններ և հորդորելով քաղաքացիներին մասնակցել ընտրություններին հնարավորինս մեծ թվով:

31 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հաստատել են վարչական միջոցների չարաշահման դեպքերը Երևանում և տաս մարզերից ութում: Արարատ մարզի մի գյուղում համայնքի ղեկավարը համայնքի շենքն օգտագործել է որպես նախընտրական շտաբ: Արագածոտնի մարզի մի գյուղում համայնքի աշխատակիցներն օգտագործել են համայնքի սարքավորումները քարոզչության նպատակով և նույն մարզի մի քաղաքում նախընտրական շտաբը մատակարարվել է քաղաքապետի գրասենյակի սարքավորումներով: Կապանի քաղաքապետարանն օգտագործել է իր միջոցները քարոզչության համար: Շիրակի մարզի մի գյուղապետ քարոզչության նպատակով օգտագործել է գյուղապետարանի ավտոմեքենան: Լոռու մարզի գյուղապետերը քարոզչություն են իրականացրել գյուղերի վարչական գրասենյակներում: Կոտայքի մարզի մի գյուղում վարչական շենքն օգտագործվել է որպես քարոզչական նյութերի տարածման կետ և մեկ այլ վարչական շենքի սարքավորումներ օգտագործվել են քարոզչության համար:

32 5.4 պարբերությունը ամրապնդում է «պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տանրանջատումը, մասնավորապես, քաղաքական կուսակցությունները չպետք է միաձուլվեն մետությանը»:

գործող նախագահի օգտին քվեարկելու նպատակով:[33] Նման անհարկի ազդեցություն, մասնավորապես պետական ծառայողների նկատմամբ, կարող է հետևանքներ ունենալ անհատի ապրուստի վրա և հարցի տակ է դնում քաղաքացիների կարծիք ունենալու և արտահայտելու հնարավորությունը՝ պատժից երկյուղ չկրելով, ինչպես ամրագրված է 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:[34]

Պետական պաշտոնյաները պետք է զերծ մնան վարչական ռեսուրսների չարաշահումից, ներառյալ պաշտոնական դիրքի չարաշահումը նրանց աշխատակիցների և հանրության նկատմամբ: Արդյունավետ միջոցներ է պետք ձեռնարկել՝ հանրային կառավարման, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների, անկողմնակալությունը ապահովելու ուղղությամբ: Նրանք պետք է զերծ մնան ընտրողների վրա ճնշում գործադրելուց, ինչպես քարոզարշավի ընթացքում, այնպես էլ ընտրությունների օրը: Քրեական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ ներառելով հանցագործություններ քարոզչության նպատակով պաշտոնական դիրքի և վարչական ռեսուրսների չարաշահելու համար:

Իշխանությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ընտրական գործընթացի ամբողջականության նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղությամբ՝ ցուցաբերելով հարգանք քաղաքացիների հիմնարար քաղաքացիական և քաղաքական նախընտրությունները արտահայտելու իրավունքի նկատմամբ, ինչպես ամրագրված է 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:

Մեծ թվով պետական և տեղական ինքնակառավարման պաշտոնյաներ, ովքեր, համաձայն Ընտրական օրենսգրքի, իրավունք չունեն իրականացնել քարոզչություն իրենց պաշտոնական լիազորությունները կատարելիս, շրջանցել են օրենքը արձակուրդ ձևակերպելով, որպեսզի գործող նախագահի համար ակտիվորեն մասնակցեն քարոզչությանը:[35] Այս հանգամանքը նպաստել է պետության և քաղաքական

---

33 Երևան, Կապան և Վանաձոր քաղաքներում ուսուցիչներին պարտադրել են մասնակցել քարոզչական միջոցառումներին և իրենց անձնագրերի համարները տալ դպրոցի տնօրեններին: Շիրակի մարզում պետական հաստատությունների բազմաթիվ տնօրեններ համախմբել են իրենց աշխատակիցներին և խրախուսել ընտրել գործող նախագահին: Վանաձորում չորս տարբեր հաստատությունների բժշկական աշխատակազմերի պարտադրվել է մասնակցել հարահավաքի: Երևանում երկու հանրային աշխատողներ հայտնել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներին, որ իրենց ճնշել են, որպեսզի անդամագրվեն ՀՀԿ-ին:

34 7.7 պարբերությունը սահմանում է, որ մասնակից պետությունները պետք է «ապահովեն, որ օրենքը և հանրային քաղաքականությունը պետք է թույլ տան, որ քարոզչությունն իրականացվի ազնիվ և ազատ մթնոլորտում, որտեղ ոչ վարչական գործողությունները, ոչ բռնությունները, ոչ սպառնալիքները չպետք է արգելք հանդիսանան կուսացությունների և թեկնածուների համար իրենց տեսակետները և հնարավորություններն ազատ արտահայտելու համար, կամ զերծ պահեն ընտրողներին դրանց մասին տեղեկանալուց և քննարկելուց կամ առանց պատժից վախի քվեարկելու»:

35 10 մարզպետներից ինը արձակուրդ են վերցրել գործող նախագահի օգտին քարոզչություն իրականացնելու նպատակով: Հունվարի 20-ին Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանին տրված հարցազրույցում պարոն Սարգսյանը հայտարարել է. «…ինչու նրանք չպետք է օգտագործեն իրենց իշխող դիրքը, ես ի նկատի ունեմ, իրենց հեղինակությունը, իրենց քաղաքական կուսակցության կամ իրենց կուսակցության առաջնորդի հաղթանակն ապահովելու համար» տես՝ http://www.rferl.org/content/armenia-president-serzh-sarkisian-interview/24878387.html:

կուսակցության, ինչպես նաև պաշտոնական և քարոզչական գործառույթների միջև բաժանման աղճատմանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները մատնանշել են Ընտրական օրենսգրքի մի քանի խախտումներ մարզային կամ համայնքային ծառայողների կողմից, ովքեր անցկացնում էին քարոզչություն իրենց լիազորությունները կատարելիս:[36]

Հանրային կառավարման անկողմնակալության բացակայությունը հակասել է 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.4 և 7.7 պարբերություններին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նաև տեղեկացել է երկու պետական պաշտոնյաների ընտրություններից հետո ներկայացրած հրաժարականների մասին, ովքեր եղել են այն համայնքներից, որտեղ պարոն Հովհաննիսյանի հաղթել էր քվեների մեծամասնությամբ:[37]

Ընտրական օրենսգրքի համաձայն, նախընտրական շտաբները չեն կարող գտնվել այն շինություններում, որտեղ գտնվում են ընտրական հանձնաժողովները կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ այն դեպքերի, երբ նմանատիպ շինություն զբաղեցնող տարածքը չի պատկանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս բացառությունը լայնորեն օգտագործվել է գործող նախագահի կողմից, ով ունեցել է նախընտրական շտաբների կամ ՀՀԿ-ի գրասենյակների ծավալուն ցանց, որը նույնպես օգտագործվել է քարոզչության համար:[38]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները զեկուցել են մի քանի դեպքերի մասին, երբ գործող նախագահի կամ ՀՀԿ-ի շտաբները գտնվել են կամ ընտրական հանձնաժողովների հետ մեկտեղ նույն շենքերում,[39] կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների[40] զբաղեցրած շենքերում, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող

---

36 Որոշ օրինակներ ընդգրկել են՝ Արագածոտնի գործող մարզպետը, որը արձակուրդ չի վերցրել, աշխատանքային ժամին ներկա է եղել ՀՀԿ գրասենյակում: Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ղեկավարը, քարոզարշավի նպատակով արձակուրդում եղած ժամանակ, գտնվել է իր հանրային գրասենյակում: Արմավիրի մարզում քարոզչական միջոցառումները տեղի են ունեցել աշխատանքային ժամերին և հանրային ծառայողները, որոնք արձակուրդում չեն եղել մասնակցել են դրանց: Շիրակի մարզում հինգ գյուղապետ և երկու փոխգյուղապետ իրենց աշխատանքային ժամերին ներգրավված են եղել քարոզչական միջոցառումներում: Վայոց Ձորի երեք գյուղերում գյուղապետերը քարոզչություն են իրականացրել առանց արձակուրդ վերցնելու:

37 Շիրակի մարզպետը և ՀՀԿ կողմից նշանակված Արմավիրի մարզպետը հայտնել են իրենց հրաժարականի մասին:

38 ՀՀԿ-ի կողմից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տրամադրած տեղեկատվության համաձայն գործող նախագահի երկրի տարածքում (բացառությամբ Երևանի) նախընտրական շտաբների թիվը եղել է 1,186: Մյուս թեկնածուները կամ չեն ունեցել նման շտաբներ, կամ ունեցել են սահմանափակ թվով՝ մաշ քաղաքներում:

39 Նման 4 դեպքեր են դիտարկվել Արագածոտնի և Արմավիրի մարզեր այցելության ժամանակ:

40 Ընդհանուր առմամբ 13 նմանատիպ դեպքեր են դիտարկվել Երևանում և Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում:

շինություններում:[41]

Կուսակցության գրասենյակները կամ նախընտրական շտաբները չեն կարող գտնվել այն շենքերում, որոնք զբաղեցրած են կամ պատկանում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ընտրական օրենսգիրքը կարող էր արդյունավետ լինել ամբողջականությունն ապահովելու և քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը ավելացնելու հարցում, եթե այն կիրառվեր պատշաճ կերպով:[42]

Ըստ օրենքի, թեկնածուները պետք է իրենց ընտրությունների հետ կապված բոլոր ծախսերը կատարեն Հայաստանի Կենտրոնական բանկում բացված հատուկ բանկային հաշվի միջոցով: Մինչդեռ Ընտրական օրենսգիրքը տարածքների վարձակալումը նշում է որպես քարոզչական ծախս, ԿԸՀ-ն որոշում էր կայացրել, ըստ որի նախընտրական շտաբների վարձակալությունը հանվել էր ծախսերի ցուցակից, որոնք պետք է ընգրկվեին թեկնածուների ֆինանսական հայտարարագրերում: [43] Քարոզչական միջոցառումներ անցկացնելու համար տարածքների վարձակալությունը նույնպես չի հայտարարագրվել: Այլ ծախսեր, ինչպիսին օրինակ նախընտրական շտաբներում աշխատակիցների վարձատրությունը, նույնպես չեն ընդգրկվել Օրենքի կողմից քարոզչական ծախսերի շարքում և չեն հայտարարագրվել թեկնածուների կողմից:[44]

Բոլոր թեկնածուները գրանցումից հետո ներկայացրել են իրենց եկամուտների և միջոցների հայտարարագրերը, բայց ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերաքննիչ ծառայությունը (ՎՎԾ) հայտարարագրված տվյալների իսկությունը ստուգելու իրավասություն չունի: Պարոն Մելիքյանը չի բացել նախընտրական հիմնադրամի հաշիվ և չի ներկայացրել

---

41 Նման դեպքեր դիտակվել են հետևյալ մարզերում՝ Արմավիր (քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող շախմատի դպրոցում, թանգարանում և հյուրանոցում), Սյունիք (գյուղական պոլիկլինիկայում), Վայոց Ձոր և Երևան (հանրային գրադարաններում), Արագածոտն, Կոտայք և Սյունիք (հինգ Մշակույթի տներում), և Կոտայք, Լոռի և Շիրակ (դպրոցի սեփականություն հանդիսացող երեք շինություններում և դպրոցում նույնպես):

42 Թեկնածուները կարող են իրենց քարոզարշավը ֆինանսավորել իրենց սեփական (մինչև 5մլն դրամ՝ մոտ 9,250 եվրո) և ընտրողների կամավոր նվիրատվությունների միջոցներով (մինչև 100 000 դրամ, մոտ 185 եվրո յուրքանչյուր ընտրողից): Կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուները կարող են իրենց առաջադրած կուսակցություններից ստանալ մինչև 25 մլն դրամ (մոտ 46 300 եվրո): Անանուն աղբյուրներից, օտարերկրա ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացած նվիրատությունները թեկնածուներին չեն թույլատրվում: Նախագահի թեկնածուն քարոզարշավի համար կարող է ծախսել առավելագույնը 100 մլն դրամ (մոտ 188, 700 եվրո):

43 2012 թվականի փետրվարի16-ի ԿԸՀ-ի թիվ 33 որոշում ՀՀ Ընտրական օրենսքգրի հոդված 26-ի տարաբնույթ ընկալումը բացառելու նպատակով պաշտոնական պարզաբանման մասին:

44 Քարոզչության ծախսերի վերաբերյալ հայտարարագրերը պարունակել են մանրամասն տվյալներ քարոզչական նյութեր տրամադրելու, լրատվամիջոցներով գովազդի և պաստառների համար կատարված ծախսերի մասին: Գրասենյակների տարածքների, տրանսպորտային միջոցների, հեռահաղորդակցման, տեխնիկական միջոցների կամ անձնակազմի ծախսերի վերաբերյալ ոչ մի տվյալ չի ներառվել:

ֆինանսական հայտարարագրեր, թեպետ նրա նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվել, քանի որ նման միջոցներ նախատեսված չեն:[45]

Կենտրոնական բանկը ներկայացրել է ՎՎԾ-ին զեկույցներ թեկնածուների նախընտրական հիմնադրամների վերաբերյալ յուրաքանչյուր երեք աշխատանքային օրը մեկ: Այնուամենայնիվ, այս զեկույցները ամբողջական չեն եղել, քանի որ պարունակել են տեղեկատվություն միայն մուտքերի և ծախսերի ընդհանուր թվի վերաբերյալ, բայց ոչ հիմնադրամի աղբյուրների և յուրաքանչյուր մուծման չափի կամ տեսակի մասին: Թեկնածուների և բանկերի տրամադրած հաշվետվությունների ստուգումից և ԿԸՀ-ում դրանց ներկայացումից հետո, բոլոր հաշվետվությունները հրապարակվել են ԿԸՀ-ի կայքում՝ ՎՎԾ-ի հայտարարությունների հետ մեկտեղ: [46] Ընդհանուր առմամբ, քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգը անբավարար էր և կրում էր ձևական բնույթ:[47]

Քարոզչության ֆինանսավորման ռեժիմի և ընդհանուր առմամբ ընտրական գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ամբողջականության հանդեպ հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով, իշխանությունները պետք է հստակեցնեն որոշ օրենսդրական միջոցներ կամ ներկայացնեն հստակ ընթացակարգեր, որոնք կդարձնեն ֆինանսավորման ռեժիմը ավելի հետևողական և ֆունկցիոնալ:

IX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Ա. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հայաստանում գործում են 44 վերգետնյա հեռարձակում իրականացնող հեռուստակայաններ[48]՝ ներառյալ երկրի ամբողջ տարածքում հեռարձակվող 6 ալիք, 20 ռադիոկայաններ, շուրջ 90 տպագիր մամուլ և բազմաթիվ առցանց լրատվամիջոցներ: Տեղեկատվության ամենակարևոր աղբյուրը հեռուսատատեսությունն է, հատկապես մարզերում: Հանրային Հ1 հեռուստաալիքը, որն ունի համապետական սփռում, համարվում է ամենաազդեցիկ լրատվամիջոցներից մեկը: Մինչ տպագիր լրատվամիջոցների ազդեցությունն անկում է ապրում, առցանց լրատվամիջոցների, այդ թվում նաև՝ քաղաքական ուղղվածության ինտերներտային կայքերի ընթերցողների

---

45 ԿԸՀ-ն կարծիք է հայտնել, որ դա անհրաժեշտ չի եղել, քանի որ նա չի ունեցել որևէ մուտքեր կամ ծախսեր:

46 Ըստ հայտարարագրված և հրապարակված տեղեկատվության փետրվարի 18-ի դրությամբ պարոն Սարգսյանը և պարոն Հովհաննիսյանը ստացել են 102 և 91 մլն ՀՀ դրամ (188,679 և 166,000 եվրո)՝ համապատասխանաբար և ծախսել են 99.843 և 91 մլն ՀՀ դրամ (188,400 and 166,000 եվրո)՝ համապատասխանաբար: Մնացած թեկնածուները ստացել են ընդհանուր առմամբ 19,000,000 ՀՀ դրամ (35,000 եվրո) և ծախսել են ընդհանուր 16,000,000 մլն ՀՀ դրամ (29,500 եվրո): տես՝ http://www.elections.am/audit/.

47 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստուգել է ԿԸՀ կայքում հրապարակված որոշ հայտարարագրերում նշված մուտքերի և ծախսերի տվյալները և գտել, որ ներկայացված հաշվարկները սխալ են:

48 Համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) կողմից ներկայացված տեղեկատվության լրացուցիչ 52 ալիք հեռարձակվում են կաբելային ցանցով:

շրջանակը արագորեն աճում է: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ հանդիպումներում զրուցակիցները ողջունել են առավել ազատ լրատվական միջավայրի գոյությունը և հատկապես համացանցում առկա տեղեկատվության բազմազանությունը: Սակայն, նրանք նաև մատնանշել են որոշ հարատև խնդիրներ, այդ թվում նաև ինքնագրաքննությունը և խմբագրական անկախության վրա ազդող լրատվամիջոցների սեփականության հարցը:

Հեռուսատատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) լիազորված է վերահսկել հեռարձակող լրավտամիջոցները: Հանրային հեռարձակողը՝ հանրային հեռուստատեսությունը և ռադիոն, ղեկավարվում է Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդի կողմից (այսուհետ՝ Խորհուրդ): ՀՌԱՀ-ի անդամների կեսը ընտրվում են Խորհդարանի կողմից և մյուս կեսը նշանակվում են Նախագահի կողմից: Խորհուրդը ունի հինգ անդամ, ում նշանակում է Նախագահը:

Զրպարտությունը և վիրավորանքը ապաքրեականացվել են 2010 թ. մայիսին, իսկ 2011 թվականի նոյեմբերին Սահմանադրական դատարանը որոշել է, որ լրատվամիջոցները չեն կարող պատասխանատվություն կրել §փաստերի քննադատական գնահատականի» և §գնահատող դատողությունների» համար: Սույն որոշումը զգալիորեն սահմանափակել է լրատվամիջոցների նկատմամբ նախկինում կիրառվող մեծ տուգանքները՝ զրպարտության վերաբերյալ քաղաքացիական դատավարություններում: [49] Անյուամենայնիվ, 2013թ. փետրվարի 12-ին, 12 հասարակական կազմակերպություններ հանդես են եկել լրատվամիջողների դեմ վերջին դատական հայցերի դեպքերը դատապարտող հայտարարությամբ՝ կոչ անելով §գործարարներին փնտրել արտադատական լուծումներ, դատարաններին՝ ավելի հավասարակշռված մոտեցում և օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները հստակեցնելու համար¦:[50]

Բ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի և լրատվամիջոցների ազատությունը: Մինչ §Հեռուստատեսության և ռադիոյի մասին¦ ՀՀ օրենքը արգելում է գրաքննությունը և սահմանում է մի շարք կանոններ հեռարձակող լրատվամիջոցներով քարոզարշավի լուսաբանման համար, Ընտրական օրենսգիրքը մնում է միակ իրավական հիմքը լրատվամիջոցներով նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար: Այն սահմանում է, որ և՛ հանրային և՛ մասնավոր լրատվամիջոցների լրատվական հաղորդումները պարտավոր են ներկայացնել անաչառ և անկողմնակալ տեղեկատվություն թեկնածուների նախընտրական քարոզարշավի վերաբերյալ և տրամադրել հավասար և արդար պայմաններ: Քարոզարշավի հեռարձակումը հեռուստատեսությամբ և ռադիոյով պետք է հստակորեն սահմանվի որպես այդպիսին:

---

49 ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը ողջունել է այս որոշումը: Տես՝ԵԱՀԿ մշտական հանձնաժողովի 2011թ. Նոյեմբերի 24-ի հեռթական զեկույցը՝ http://www.osce.org/fom/85336.

50 Հայտարարությունը հասանելի է՝ http://www.ypc.am/bulletin/t/45608/ln/en/#45610.

Յուրաքանչյուր թեկնածու իրավունք ունի ստանալու մինչև 60 րոպե և 120 րոպե անվճար եթերաժամ՝ համապատասխանաբար հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով: [51] Երկու լրատվամիջոցն էլ կատարել են իրենց իրավական պարտավորությունը: Թեկնածուների գրանցման ավարտից մեկ օր անց, ԿԸՀ-ն հաստատել է անվճար եթերաժամի ժամանակացույցը, ինչպես նախատեսված է Ընտրական օրենսգրքով: Բոլոր մրցակիցները օգտագործել են իրենց տրամադրվող անվճար եթերաժամը: [52] Հ1 հեռուստաընկերությունը հեռարձակել է թեկնածուների քարոզչական տեսահոլովակները երեկոյան ժամը 18:00-ից սկսած՝ հիմնական փրայմ-թայմից զգալիորեն շուտ, ինչը տեսականորեն սահմանափակում է դիտողականությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պարտավոր էր վերահսկել լրատվամիջոցների կողմից իրավական դրույթների պահպանումը, այդ թվում իր կողմից իրականացվող լրատվամիջոցների մոնիտորինգի միջոցով: ՀՌԱՀ-ը ամեն օր մշտադիտարկել է 12 լրատվամիջոց, որոնց թվում՝ 5 հանրապետական նշանակության հեռուստաալիքներ: [53] Մշտադիտարկման մեթոդաբանությունը կենտրոնացած է եղել միայն քանակական վերլուծության վրա՝ շրջանցելով հեռարձակված նյութի տոնայնության գնահատումը: Ի հավելումն, լիցենզավորված այլ ռադիո և հեռուստաընկերությունների քարոզարշավի լուսաբանման տվյալները տրամադրվել են հենց հեռարձակողների կողմից և միայն պատահականության սկզբունքով ենթարկել մանրակրկիտ ստուգման ՀՌԱՀ-ի կողմից: 2012 թ. խորհրդարանական ընտրություններին հաստատված դրական փորձառությունը շարունակելով, ՀՌԱՀ-ը հրապարակել է երկու համեմատաբար մանրամասն մշտադիտարկման զեկույցներ մինչև ընտրությունները և վերջնական զեկույց՝ ընտրություններից կարճ ժամանակ անց: Համաձայն ՀՌԱՀ-ի, լրատվամիջոցներին առնչվող բողոքներ չեն եղել: ՀՌԱՀ-ը չի իրականացրել թեկնածուների գործունեության շուրջ լրատվամիջոցների

---

51 Ի լրումն յուրաքանչյուր թեկնածու կարող էր գնել մինչև 120 և 180 րոպե վճարովի եթերաժամանակ համապատասխանաբար հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով: Ընդհանուր առմամբ 22 լրատվամիջոցներ իրենց վճարովի եթերաժամանակն են առաջարկել թեկնածուներին: Օրենքով սահմանված կարգով՝ գները հրապարակվել են ընտրություններից երկու ամիս առաջ. բոլոր խոշոր լրատվամիջոցները սահմանել են նույն գինը ինչ որ 2012-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ հանրային հեռուստաընկերություն՝ մեկ րոպեն 80,000 ՀՀ դրամ (148 եվրո) և հանրային ռադիոն՝ 3,600 ՀՀ դրամ (7 եվրո), մինչդեռ ամենաթանկը եղել են մասնավոր Շանթ՝ 120,000 ՀՀ դրամ (222 եվրո) և Արմենիա՝ 110,000 ՀՀ դրամ (203 եվրո) հեռուստաընկերությունները: Պարոն Հարությունյանը, պարոն Մելիքյանը և պարոն Սեդրակյանը երերաժամանակ չեն գնել:

52 Պարոն Անդրիաս Ղուկասյանն իր եթերաժամանակը տրամադրել է քաղաքացիական հասարակության տարբեր ներկայացուցիչների: Պարոն Սեդրակյանը քարոզարշավի առաջին 10 օրերից հետո նույնպես երբեմն տրամադրել է իրեն հասանելի եթերաժամանակը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների:

53 ՀՌԱՀ-ն ամենօրյա հիմունքներով դիտարկել է երկու հանրային հեռարձակողներին: Դիտարկված մյուս 10 լրատվամիջոցները ներառել են երկրի ամբողջ տարածքում հեռարձակվող 4 և միայն Երևանով և մերձակա տարածքներով սահմանափակված 3 հեռուստաալիք և 3 ռադիոկայան: Այս 7 հեռուստաալիքները և 3 ռադիոկայաններն ընտրվել են համապատասխանաբան ամենանշանակալից 14 հեռուստաալիքների և 19 ռադիոկայանների ցուցակից:

մշտադիտարկում քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ:[54]

Պետք է քննարկել ՀՌԱՀ-ի իրավասությունների և ռեսուրսների ուժեղացման հարցը, որոնք անհրաժեշտ են լրատվամիջոցների լիարժեք և անկախ մշտադիտարկում իկանացնելու համար և փոխարենը չհանձնարարել լրատվամիջոցներին տրամադրել հեռարձակման տվյալներ: Ավելին, հարկ է քննարկել ՀՌԱՀ-ի լրատվամիջոոների մշտադիրտարկման մեթոդաբանության զարգացումը այնպես, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել և գնահատել լուսաբանման տոնայնությունը: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՌԱՀ-ը պետք է կատարի իր վերահսկիչ դերը՝ իրականացնելով լրատվամիջոցների մշտադիտարկում քարոզարշավի ժամանակահատվածից դուրս:

Գ. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հունվարի 11-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է վեց հեռուստալիքների, երկու ռադիոկայանների, երկու առցանց լրատվամիջոցների և երեք օրաթերթերի կողմից իրականացվող ընտրությունների լուսաբանման քանակական և որակական վերլուծության վրա հիմնված մշտադիտարկումը: [55]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ լրատվամիջոցները զգալի ուշադրություն են դարձրել քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությանը: Տեղեկատվության ծավալը մեծացել է նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկից հետո՝ նորությունների, բազմաթիվ հարցազրույցների և հայտարարությունների միջոցով: Սակայն դիտարկված հեռարձակվող լրատվամիջոցները (բացառությամբ ԱրմՆյուս-ից, Երկիր Մեդիայից և Ազատություն Ռադիոկայանից) լսարանին առաջարկել են ֆորմալ լուրերի լուսաբանում, որը մեծապես կենտրոնացած է եղել քարոզարշավի ընթացքում իրականացվող միջոցառումների, այլ ոչ թե կոնկրետ քաղաքական գաղափարների վրա, և հետևաբար չի տրամադրել նախընտրական ուղերձներին վերլուծական մեկնաբանում: Ի հակադրություն սրան՝ առցանց և տպագիր լրատվամիջոցները ներկայացրել են որոշ քննադատական մեկնաբանություն և վերլուծություն:

---

54 Երևանի մամուլի ակումբի զեկույցում նշվել է, որ մինչ պաշտոնական քարոզարշավի ընթացում լրատվամիջոցները թեկնածուների գործունեությունը լուսաբանել են հավասարակշռված եղանակով, քարոզարշավին նախորդած վերջին շաբաթվա ընթացքում (հունվարի 14-20) գործող նախագահի՝ իր պաշտոնական գործունեության շրջանակներում, ծավալուն լուսաբանումը նրան զգալի առավելություն է տվել մյուս մրցակիցների հանդեպ: Զեկույցը եզրակացրել է, որ քարզարշքվին անմիջապես նախորդած և քարզարշավի ժամանակաշրջանների միջև նման տարբերությունը ինքնին ապացուցում է կանոնակարգման և պաշտոնական քարոզարշավից ավելի երկար ժամանակահատված դիտարկելու անհրաժեշտությունը: Տես՝ www.ypc.am/bulletin/t/45616/ln/en.

55 Դիտարկված լրատվամիջոցներն են. Հ1 (հանրային հեռուստատեսություն), Հ2, Արմենիա, Շանթ, Կենտրոն և Երկիր Մեդիա (համապետական հեռարձակում ունեցող մասնավոր հեռուստալիքներ), Հանրային ռադիոյի և Ռադիո Ազատություն (ռադիոկայաններ), Հայաստանի Հանրապետություն (պետության կողմից ֆինանսավորվող օրաթերթ), Առավոտ և Հայկական Ժամանակ (մասնավոր օրաթերթեր), www.news.am և www.1in.am (համացանցային մամուլ) :

Ընտրական Օրենսգիրքը պահանջում է թեկնածուների վերաբերյալ անկողմնակալ և անաչառ տեղեկատվության տրամադրում: ՀՌԱՀ-ն չի տրամադրել է պաշտոնական և հստակ ուղեցույց, թե օրենքն ինչպես պետք է մեկնաբանվի: Լրատվամիջոցները զգուշությամբ են մեկնաբանել այս դրույթները և թվում է թե, մտահոգված են եղել, որ վերլուծական տեղեկատվությունը կարող է ընկալվել որպես կողմնակալ:

Ընտրական Օրենսգիրքը կարող է փոփոխվել, այնպես որ լրատվամիջոցներին ընդհանուր կիրառելի ուղեցույցներ տրամադրվեն ընտրություններին առնչվող լուսաբանման համար: Նման դրույթները կարող են հիմնվել եղած անկողմնակալության և հավասարակշռվածության պահանջների վրա, սակայն, միևնույն ժամանակ, թույլ տան քարոզարշավի անկախ խմբագրական լուսաբանում:

Երևանի Մամուլի ակումբը հեռարձակողներին՝ ներառյալ հանրային հեռուստաընկերությանը, կոչ է արել կազմակերպել բանավեճեր: [56] Թեպետ, որոշ մասնավոր լրատվամիջոցների կողմից բանավեճի առաջարկ է եղել, սակայն գործող նախագահի կողմից մասնակցությունը մերժելուց հետո, այդպիսիք չեն կազմակերպվել: Մյուս թեկնածուները ևս որոշել են այդ հնարավորությունից չօգտվել: Արդյունքում ընտրողներին հնարավորություն չի տրվել մրցակից թեկնածուների նախընտրական ծրագրերի շուրջ բովանդակալից մտքերի փոխանակություն կամ գործող նախագահի պաշտոնավարման վերաբերյալ քննարկում տեսնել: Սա ուղեկցվել է հեռուստաալիքների կողմից կազմակերպված բազմաթիվ դեմ առ դեմ հարցազրույցներին մասնակցելուց գործող նախագահի մերժումով և նման խնդիրները իրենց հաղորդումներում բարձրաձայնող քննադատական լրատվամիջոցների ընդհանուր բացակայությամբ: [57]

Մշտադիտարկված լրատվամիջոցները կանոնավոր կերպով լուսաբանել են բոլոր թեկնածուներին: Միևնույն ժամանակ պարոն Սերժ Սարգսյանի ու պարոն Ռաֆֆի Հովհաննիսյանի մասին լուսաբանումը առավել ծավալուն է եղել, ընդ որում՝ գործող նախագահի մասին լրատվությունը գերիշխող է եղել թվով յոթ, իսկ պարոն Հովհաննիսյանի վերաբերյալ՝ չորս մշտադիտարկվող լրատվամիջոցներում: Պարոն Սարգսյանն ամենամեծ քաղաքական լուսաբանումն է ստացել ամենահայտնի մասնավոր Շանթ և Արմենիա հեռուստաալիքների կողմից՝ համապատասխանաբար 32 տոկոս և 30 տոկոս՝ գրեթե բացառապես դրական և չեզոք լուսաբանում: Պարոն Հովհաննիսյանը ամենաշատը լուսաբանվել է Հ2 և Կենտրոն հեռուստաալիքների կողմից՝ համապատասխանաբար 29 տոկոս և 26 տոկոս: Լրատվամիջոցները նաև մեծածավալ լուսաբանել են պարոն Հայրիկյանի վրա կատարված հարձակումը և դրան հաջորդած զարգացումները: [58]

Հանրային Հ1 հեռուստաալիքի և Հանրային ռադիոյի կողմից թեկնածուների լուսաբանումը արտացոլել է տարբեր թեկնածուների ակտիվության տարբեր մակարդակներ: Հ1

---

56 2013թ. Հունվարի 25-ի Հայտարարություն, հասանելի է՝ http://www.ypc.am/expert/ln/en:

57 Պարոն Սարգսյանը իր տեսակետները ներկայացրել է միայն Ազատություն ռադիոկայանին 2013 հունվարի 20-ին տրված հարցազրույցում:

58 Արդյունքում պարոն Հայրիկյանը եղել է հանրային ռադիոյով և www.news.am-ով ամենաշատ լուսաբանված թեկնածուն:

հեռուստաալիքը առավել լայն լուսաբանում է տրամադրել Սերժ Սարգսյանին և Ռաֆֆի Հովհաննիսյանին, որոնք ստացել են համապատասխանաբար 20 և 18 տոկոս գրեթե բացառապես չեզոք կամ դրական լուսաբանում: Միևնույն ժամանակ Հ1 հեռուստաալիքի գլխավոր խմբագրի վարած "Տեսանկյուն" վերլուծական հաղորդման շրջանակներում կողմնակալություն է ցուցաբերել ընդդիմադիր կուսակցությունների և որոշ թեկնածուների նկատմամբ:

Դիտարկված հեռուստաալիքների մեծ մասը քաղաքական լուրերը լուսաբանելիս համեմատաբար քիչ ծավալ են հատկացրել իշխանություններին և գործող նախագահին: Պարոն Սարգսյանի վերաբերյալ լրատվամիջոցների հաղորդումները, ներառյալ նրա կողմից տարբեր հասարակական կառույցներ կամ բացման արարողություններ այցերը, հաճախ հստակորեն չեն տարանջատվել, թե արդյոք իրականացվել են վերջինս նախընտրական քարոզարշավին զուգահեռ, թե որպես դրա մաս: Սա ընդգծել է նրա պաշտոնական գործունեության և քարոզարշավի շրջանակներում իրականացված գործունեության միջև տարանջատում կատարելու կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Առցանց լրատվամիջոցները, ներառյալ գոյություն ունեցող ավանդական լրատվամիջոցների համացանցային կայքերը, ներկայացրել են տեսակետների լայն բազմազանություն, և հաճախ լրացրել են հեռարձակվող լրատվամիջոցների կողմից խորքային վերլուծական և քննադատական հաղորդումների բացը:[59] Դիտարկված երկու տեսակ առցանց լրատվամիջոցները իրենց ընթերցողներին առաջարկել են քարոզարշավի լայնածավալ, իսկ www.1in.am-ի դեպքում նաև, ավելի վերլուծական լուսաբանում՝ զգալիորեն լուսաբանելով պարոն Հայրիկյանի վրա կատարված հարձակումը: Նա եղել է ամենաշատ լուսաբանված թեկնածուն www.news.am –ում՝ 33 տոկոս և գրեթե նույն մակարդակում պարոն Սարգսյանի հետ www.1in.am –ում (համապատասխանաբար 25 և 26 տոկոս):

Պետության կողմից ֆինանսավորվող Հայաստանի Հանրապետություն օրաթերթը կողմնակալություն է ցուցաբերել պարոն Սարգսյանի հանդեպ՝ նրան տրամադրելով թեկնածուների լուսաբանման համար հատկացված ծավալի 21 տոկոսը՝ ընդհանուր դրական երանգով: Ի հավելումն, օրաթերթը իշխանություններին է հատկացրել 36 տոկոս լուսաբանում՝ դիտարկված բոլոր լրատվամիջոցներից ամենաբարձր տոկոսը: Մյուս կողմից, Հայկական Ժամանակ մասնավոր օրաթերթը հստակ կողմնակալություն է ցուցաբերել պարոն Սարգսյանի հանդեպ՝ նրան տրամադրելով 39 տոկոս խիստ քննադատական լուսաբանում: Հայկական Ժամանակի կողմից պարոն Հովհաննիսյանը և պարոն Բագրատյանը ներկայացվել են բավական հավասարակշռված կերպով:

X. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրությունների միջազգային և տեղական դիտարկում: Թեկնածուները իրավունք ունեն նշանակելու երեքական վստահված անձ

[59] Համացանցային կայք էջեր՝ www.civilnet.am, www.azatutyun.am, և www.galatv.am.

յուրաքանչյուր ՏԸՀ-ում, որոնք ունեն նույն իրավունքները, ինչ դիտորդները: Տեղական դիտորդները կարող էին առաջադրվել հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք ներգրավված են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում: Անհատները պարտավոր էին հանձնել ԿԸՀ-ի կողմից անցկացված ստուգարք, որպեսզի որակավորվեն որպես դիտորդներ, այդ դեպքում նրանք ստանում են որակավորման վկայագիր, որը ուժի մեջ է երեք տարի:

Համապարփակ գործընթացի շրջանակում ԿԸՀ-ն հավատարմագրել է 6,251 տեղական դիտորդներ 26 հասարակական կազմակերպություններից, 572 դիտորդ 10 միջազգային կազմակերպություններից, 34 դիտորդ Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչություններից և ընտրություններ համակարգող օտարերկրյա կառույցներից 25 ներկայացուցիչ: Մայիսի 6-ի դրությամբ միայն 10 տեղական դիտորդական կազմակերպություններ են ներկայացրել հետընտրական հայտարարություններ կամ զեկույցներ:

Տեղական դիտորդների պարտադիր ստուգարքը և հավաստագրումը պետք է վերանայվի: Դիտորդների ցանկացած վերապատրաստում պետք է լինի դիտորդական կազմակերպության պարտականությունը: ԿԸՀ-ն կարող է քննարկել լրացուցիչ, ըստ ցանկության վերապատրաստումներ առաջարկելու հնարավորությունը:

Ընտրական օրենսգրքի 30.5 հոդվածը լիազորում է ԿԸՀ-ին չեղյալ համարել կազմակերպության հավատարմագրումը, եթե նրա դիտորդներից որևէ մեկը սատարում է ընտրությանը մասնակցող թեկնածուին: ԿԸՀ-ն հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ նա չի կիրառի այս դրույթը, այլ չեղյալ կհամարի անհատ դիտորդի հավատարմագրումը, ով կխախտի Ընտրական օրենսգիրքը:

Ընտրական օրենսգիրքը կարող է լրացվել, որպեսզի հնարավոր լինի խուսափել տեղական դիտորդական կազմակերպության հավատարմագրումը կամայականորեն չեղյալ համարելու հնարավորությունից՝ նրա անհատ անդամների կողմից խախտումների դեպքում:

XI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Դիմումների և բողոքների գործընթացը կարգավորված է Ընտրական օրենսգրքով, Վարչական Դատավարության մասին օրենսգրքով, Վարչարարության հիմունքների և Վարչական վարույթի մասին և Սահմանադրական Դատարանի մասին օրենքներով: Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողով, իսկ ԿԸՀ դեմ բոլոր բողոքների քննությունը Վարչական դատարանի ընդդատության ներքո է: Լրատվամիջոցներին առնչվող ստացված ցանկացած բողոք ԿԸՀ-ն կարող է փոխանցել ՀՌԱՀ-ին կամ Վարչական դատարանին:

Ընդհանուր վարչական օրենքները հնարավորություն են տալիս բողոքատուներին ընտրել և բողոքը անմիջապես Վարչական դատարան ներկայացնել, ինչը վերադաս հանձնաժողովների հետ ընդատության համընկնում է ստեղծում: [60] Ընտրական հանձնաժողովում բողոքի քննությունը կասեցվում է, եթե գործը արդեն գտնվում է դատարանի քննության ներքո: Թեկնածուների կողմից ներկայացված ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ բողոքները, ինչպես նաև քարոզարշավի անցկացման ընթացքում առաջացած «անհաղթահարելի խոչընդոտների» մասին հայտարարությունը գտնվում են միայն Սահմանադրական դատարանի ընդդատության տակ: Ինչ վերաբերում է ընտրություններին առնչվող այլ խնդիրներին, քաղաքացիները կարող են վիճարկել իրավական դրույթների սահմանադրականությունը միայն բոլոր դատական ատյանները սպառելուց հետո: Նմանատիպ գործերի քննությունը կարող է տևել մինչև տաս ամիս, ինչը չի երաշխավորում ընտրական ժամանակահատվածում արդյունավետ պաշտպանություն, ինչպես ամրագրված է 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությամբ:[61]

Իրավական դաշտը պետք է փոփոխվի, որպեսզի բացառվի երկակի ընդատությունը և պարզեցվի ընտրություններին առնչվող դիմումների և բողոքների գործընթացը՝ սահմանելով մեկ միասնական և ենթակայական գործընթաց: Տարբեր օրենքներում ամրագրված դիմումների և բողոքների գործընթացին վերաբերող բոլոր դրույթները պետք է համակարգվեն կամ հրում կատարվեն Ընտրական օրենսգրքում: Ընտրություններին առնչվող գործերի քննության համար սահմանված ժամանակահատվածը պետք է ապահովի արագ դատաքննություն:

Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է բողոք ներկայացնելու իրավունքը, այն տրամադրելով միայն նրանց, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են, այդպիսով զգալիորեն սահմանափակելով ընտրողների և դիտորդների դատական պաշտպանություն ակնկալելու իրավունքը՝ ընտրական իրավախախտումների դեպքում: Ընտրական իրավունքների վերաբերյալ դատական որոշումները չեն կարող բողոքարկվել: Ընտրություններին առնչվող հարցերով դատարանի որոշումների բողոքարկման բացակայության հնարավորությունը սահմանափակում է արդյունավետ իրավական պաշտպանության մատչելիությունը:

Ընտրական օրենսգիրքը պետք է լրացվի, որպեսզի քաղաքացիներին (կամ քաղաքացիների խմբերին), հավատարմագրված տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին թույլ տրվի բողոքներ ներկայացնել ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների դեմ, ներառյալ անօրինական քարոզարշավ իրականացնելու և ընտրությունների արդյունքների վերաբերյալ:

---

60 Ավելին, համաձայն ընդհանուր վարչական օրենքների բողոքողները կարող են ընտրել բողոքը նախ ներկայացնել վարչական մարմնին, որն ընդունել է վիճարկվող որոշումը, գործողությունը կամ անգործությունը:

61 ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը սահմանում է «վարչական որոշումների դեմ արդյունավետ բողոքարկման այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն հիմնարար իրավունքների պաշտպանությունը և կապահովեն իրավական ամբողջականությունը»:

Ընտրությունների վերաբերյալ բողոքները քննելիս ընտրական հանձնաժողովները և դատարանները ընդհանուր առմամբ որդեգրել էին ձևական մոտեցում: Բողոքների վերաբերյալ որոշումների նախագծերը, որոնք պատրաստվել էին համապատասխան գործերի լսումներից առաջ, մնացել են անփոփոխ, անկախ ներկայացված փաստարկների, ինչը մտահոգություն է առաջացնում գործընթացի թափանցիկության և արդարության վերաբերյալ: Գրեթե բոլոր բողոքները չեն ընդունվել վարույթ կամ մերժվել են ձևական հիմքերով՝ դրանցից մեծ մասն առանց ներկայացված ապացույցների և փաստերի պատշաճ քննության: Մեկ բողոք փոխանցվել է ոստիկանությանը հետագա գործողությունների համար:

Այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննել են բողոքները, բողոքողներին չեն տրամադրել արդյունավետ պաշտպանություն և ոչ էլ բարելավել են հասարակության վստահությունը ընտրությունների կազմակերպման նկատմամբ: Սա մտահոգություն է առաջացնում ընտրական մարմինների և դատարանների կողմից իրենց իրավական պարտականությունները կատարելու պատրաստակամության, քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանությունն ապահովելու և ԵԱՀԿ 1990 Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը համապատասխանելու վերաբերյալ:

Համեմատաբար քիչ թվով պաշտոնական բողոքներ են ներկայացվել, անկախ այն հանգամանքից, որ մեծ թվով ոչ պաշտոնական բողոքներ են բարձրաձայնվել: Տարբեր շահագրգիռներ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել են իրենց անվստահությունը ընտրությունների կազմակերպման, դատարանների և իրավապահ մարմինների անաչառության և ընտրական բողոքների արդյունավետ քննության վերաբերյալ:

Ընտրական հանձնաժողովները և դատարանները պետք է զերծ մնան բողոքների և դիմումների քննությունը մերժելուց: Նրանք պետք է պատշաճ կերպով քննեն բոլոր բողոքների էությունը և անկողմնակալորեն ու համապարփակորեն քննարկեն բոլոր հարակից ապացույցները: Ընտրական հանձնաժողովները պետք է ակտիվ դեր ստանձնեն բողոքները հիմնավորելու համար ապացույցներ հավաքելու գործում և այս առումով ավելի սերտ համագործակցեն իրավապահ մարմինների հետ:

Նախքան ընտրությունների օրը, ԿԸՀ-ն ստացել է հինգ բողոք: Ընտրական գրավի վերաբերյալ երկու բողոք է ստացվել, որոնք մերժվել են այն հիմնավորմամբ, որ ընտրական գրավի չափը սահմանված է Ընտրական օրենսգրքով և հետևաբար ԿԸՀ-ի իրավասությունից դուրս է: Երեք այլ բողոքները մերժվել են ըստ էության:[62] Վարչական

[62] Մի դեպքում պարոն Ղուկասյանը պնդում էր, որ պարոն Սարգսյանի թեկնածությունը հարցականի տակ է դնում ընտրությունների օրինականությունը և պահանջում էր հանել նրա թեկնածությունը: Մի այլ դեպքում, նա պահանջում էր հանել պարոն Սարգսյանի քարոզչական հոլովակներից մեկի այն հատվածը, որտեղ նա երևում էր: Նախագահի առաջադրված թեկնածու Ռուբեն Այվազյանը պահանջել է արգելել ԿԸՀ անդամների, իբրև թե, իր հանդեպ բացասական քարոզչություն կատարելուց, այն բանից հետո, երբ ԿԸՀ նախագահն ասել է, որ ինքը չի ճանաչում, թե ով է պարոն Այվազյանը:

դատարանը ստացել է հինգ բողոք:[63] Ոչ մի բողոք չի քննարկվել՝ կամ ընդդատության պակասի պատճառով, կամ մերժվել են ըստ էության:

Սահմանադրական դատարանը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այն ստացել է ընտրագրավի խնդրի վերաբերյալ առաջադրված նախագահի թեկնածուներից երկու բողոք, որոնք պահանջել են այն համարել քարոզարշավի անցկացման համար «անհաղթահարելի խոչընդոտ» և այդ պատճառով հետաձգել ընտրությունները: Այս բողոքները համարվել են անընդունելի: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ նախագահի մեկ այլ առաջադրված թեկնածու, որպես անհատ քաղաքացի ներկայացրել է երրորդ բողոքը ընտրական գրավի պահանջի սահմանադրականության վերաբերյալ: Մարտի 5-ին Սահմանադրական դատարանը մերժել է հայցը և հայտարարել է վիճարկված հոդվածի սահմանադրականության վերաբերյալ:[64]

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Օրենսդրությունը չի սահմանում ընտրություններին առնչվող քրեական հանցագործությունների քննության համար կարճ ժամանակահատված և կիրառվում են ընդհանուր քրեական դատավարության կանոնները: Այնուամենայնիվ, իրավասու մարմինները հավաստիացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք անհապաղ արձագանքել են և գործերի մեծ մասի քննությունը ավարտվել է ընտրություններին հաջորդած երկու շաբաթների ընթացքում:

Քրեական դատավարության օրենսգրքը պետք է սահմանի ընտրական հանցագործությունների քննության կարճ ժամանակահատված, որը կլինի ընտրությունների ժամանակահատվածում:

Գլխավոր դատախազությունը, Ոստիկանությունը և Հատուկ քննչական ծառայությունը հետաքննել են ընտրություններին առնչվող շուրջ 400 քրեական և վարչական գործեր: Դրանց մեծ մասը հարուցվել է մամուլում, այդ թվում համացանցում և սոցիալական կայքերում, հրապարակված տեղեկատվության հիման վրա, մինչդեռ քիչ թվով դեպքերում է ուշադրությունը հրավիրվել թեկնածուների քարոզարշավի կազմակերպիչների կողմից: Դեպքերի մեծ մասը վերաբերել է ընտրակաշառքին, ՀՀԿ ներկայացուցիչների կողմից ընտրողների ահաբեկմանը, քարոզարշավի խոչընդոտմանը և վստահված անձանց կողմից կամ բազմակի ընտրությանը:

---

63 Երկու բողոքներ վիճարկել են թեկնածուների գրանցման վերաբերյալ ԿԸՀ որոշումները ընտրական գրավի հետ կապված: Երկու այլ դեպքերում բողոքատուները պնդել են, որ ԱՎՎ-ն անտեղի մերժել է նրանց 10 տարվա մշտական բնակության տեղեկանքի տրամադրումը: Պարոն Այվազյանը բողոքարկել է ԿԸՀ-ի որոշումը, ԿԸՀ անդամների կողմից բացասական քարոզչությունն արգելելու վերաբերյալ:

64 Սահմանադրական դատարանը հայտնել է, որ ընտրական գրավի և ստորագրությունների հավաքման պահանջների համադրությունը կարող է արդյունավետ լինել թեկնածուների գրանցման գործընթացում: Այն նաև նշել է, որ ընտրական գրավի չափը չպետք է անհիմն մեծ լինի և պետք է Ազգային Ժողովի կողմից հետագա քննարկման առարկա լինի:

Ոստիկանությունը և դատախազությունը 13 դեպքերի առթիվ հարուցել են քրեական գործեր, ներառյալ վստահված անձանց կողմից քվեարկության կամ բազմակի քվեարկության հինգ գործ և ձայների գնման մեկ գործ:[65] Գործերի մեծ մասը ապացույցների բացակայության պատճառով կարճվել է նախնական քննությունից հետո՝ ինչպես իրավասու մարմիններն են բացատրել: Երեք քրեական գործ, որոնք ներառել են հինգ մեղադրյալի, ուղարկվել են դատարան:

Մյուս կողմից, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցները հայտնել են, որ առկա է ընտրությունների կազմակերպման և դատական համակարգի հանդեպ անվստահություն, և ընտրական հանցագործությունների մասին հայտնելու հասարակության դժկամությունը կարող է բացատրվել հետագա հետապնդումներից վախով:[66] Թափանցիկությունը բարելավելու նպատակով, ոստիկանությունը և Գլխավոր դատախազությունը իրենց կայքերում հրապարակել են իրենց կողմից քննված գործերի վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն, որոշ դեպքերում, ձայների գնման կամ պաշտոնյաների կողմից ահաբեկչությունների դեպքերի մասին հաղորդած անձանց անունները, հեռախոսային համարները և հասցեները հրապարակվել են, ինչը մտահոգություններ է առաջացնում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ:[67] Ոստիկանությունը հայտնել է ԸԴԱ-ին, որ իրենք տեսաձայնագրել են ամբողջական հետաքննություններ, ներառյալ ընտրական խախտումների վերաբերյալ քաղաքացիների հարցաքննություններ: Ոստիկանությունը նաև տեղեկացրել է, որ առանց համազգեստի ոստիկաններ տեսաձայնագրել են որոշ հանդիպումներ և հավաքներ: Նման գործունեությունը մտահոգություն է առաջացնում պատշաճ ընթացակարգի պահպանության վերաբերյալ, կրում է հնարավոր սպառնալի ազդեցություն քաղաքացիների նկատմամբ և կարող է խոչընդոտ հանդիսանալ ընտրական հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ կատարելիս:[68]

Արմենիա հեռուստաընկերության ամեն շաբաթյա հաղորդման ընթացքում, փետրվարի 24-ին ոստիկանությունը հայտարարել է, որ ընտրախախտումների վերաբերյալ

---

65 Վստահված անձանց կողմից քվեարկության կան բազմակի քվեարկության դեպքերում մեղադրանք է ներկայացվել այն ընտրողների դեմ, ովքեր իրականացրել են կամ փորձել են կատարել վստահված քվեարկություն, ինչպես նաև ՏՀՀ մեկ անդամի դեմ: Ձայների գնման դեպքերում, Վարագավան համայնքի (Տավուշի մարզ) ղեկավարի դեմ մեղադրանք է ներկայացվել ընտրողներին համայնքում գտնվող իր գրասենյակ հրավիրելու և 5000 ՀՀ դրամ (9 եվրո) առաջարկելու համար: Խորհրդարանի մի անդամ մեղադրվել է ընտրական հանձնաժողովի գործունեությանը խոչընդոտելու համար:

66 Ինչպես հաղորդվել է, քաղաքացիները վախեցել են վրեժխնդրության և անհարկի ճնշումների ենթարկվել:

67 Տես՝ Եվրոպայի խորհրդի վկաների ճնշելու և պաշտպանության իրավունքի մասին թիվ R (97) 13 (1997)հանձնարարականը՝ https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=566782&SecMode=1&DocId=574856&Usage=2 ; և Ոստիկանության ոլորտում անձնական տվյալների օգտագործման մասին թիվ R (87) 15 հանձնարարականը՝ https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2196553&SecMode=1&DocId=694350&Usage=2.

68 Տես՝ ԵԱՀԿ քարտուղարին կից Ոստիկանության վերաբերյալ գլխավոր խորհրդատուի Ժողովրդավարական ոստիկանական համակարգի վերաբերյալ ուղեցույցի 50 և 53 պարբերություններ http://polis.osce.org/library/f/2658/2639/OSCE-AUS-SPM-2658-EN-2639.

հայտարարությունների մեծ մասը, ինչպես և իրենք կանխատեսել են, եղել են չհիմնավորված մեղադրանքներ և միտված են եղել խաթարել իշխանությունների աշխատանքը: Նման հայտարարությունը, թվում է թե նպատակ ունի կասկածի տակ դնել ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումները, այլ ոչ թե երաշխավորել, որ խախտումները բացահայտվեն և իրավախախտները պատասխանատվության ենթարկվեն: [69]

Ոստիկանությունը, դատախազությունը և հատուկ քննչական ծառայությունը խրախուսվում են կատարել ընտրախախտումների վերաբերյալ արդյունավետ և անաչառ հետախուզություն՝ արագ և նպատակային եղանակով, նրանք պետք է երաշխավորեն, որ բոլոր հանցագործները պատշաճ կերպով կբերվեն պատասխանատվության: Պետք է երաշխավորվի, որ ընտրախախտումների վերաբերյալ հետախուզությունները պահպանում են պատշաճ ընթացակարգերը, դրանք չեն իրականացվում սպառնալիքների եղանակով և խոչընդոտող ազդեցություն չունեն քաղաքացիների նկատմամբ՝ ընտրական խախտումների վերաբերյալ հայտարարություններ կատարելիս:

Թեժ գծի միջոցով Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել պաշտոնատար անձանց կողմից ընտրողների վրա ճնշումների դեպքերի, ընտրական գրավի և ընտրական ցուցակների վերաբերյալ բողոքներ, ով որոշ գործեր փոխանցել է ոստիկանությանը և Գլխավոր դատախազությանը: Ընտրությունների օրից հետ, Մարդու իրավունքների պաշտպանը հրաժարվել է հանդիպել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ հետ և ներկայացնել հարակից տեղեկատվություն:

XII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Քվեարկության օրը ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և խաղաղ: ԿԸՀ-ն վերջնական հայտարարել է ընտրողների մասնակցության 60.2տոկոս, զգալի տարածաշրջանային տատանումներով՝ սկսած թիվ 28 ԸԸՀ-ում (Կոտայքի մարզ) 48 տոկոս մինչև Արարատի մարզի երեք ԸԸՀ-ներում 74 տոկոս մասնակցություն: Քվեարկության օրը, ՄԸԴԱ-ի դիտորդները դիտարկել են 75 ընտրական տեղամասերի բացումը, քվեարկությունը՝ 853 ընտրական տեղամասում (ՄԸԴԱ դիտորդները կատարել են ընտրական տեղամասերի ընդհանուր 970 այցելություն, դրանցից որոշներն այցելել են ավելի քան մեկ անգամ), և ձայների հաշվարկը՝ 106 ընտրական տեղամասում: Ձայների աղյուսակավորումը դիտարկվել է բոլոր 41 ԸԸՀ-ներում:

Թեկնածուների վստահված անձինք (հիմնականում պարոն Բագրատյանի, պարոն Հովհաննիսյանի և պարոն Սարգսյանի ներկայացուցիչները) ներկա են եղել բացման գործընթացի ժամանակ այցելած ընտրական տեղամասերի 42 տոկոսում, օրվա ընթացքում դիտարկված տեղամասերի 88 տոկոսում և ձայների հաշվարկի գործընթացը դիտարկած տեղամասերի 95 տոկոսում և դիտարկված ԸԸՀ-ների 55 տոկոսում: Տեղական

[69] Ոստիկանությունը նաև իր պաշտոնական կայքում հրապարակել է որոշ հայտարարություններ, ներկայացված ընտրախախտումների, հատկապես ձայների գնման, վերաբերյալ հայտարարությունները որակելով որպես բամբասանքներ. Տես՝ http://www.police.am/.

ոչ կուսակցական դիտորդները ներկա են եղել այցելված մեծ թվով տեղամասերում, հատկապես քվեարկության և ձայների հաշվարկման ժամանակ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հայտնել են քվեարկության օրը որոշակի կարգի ընտրողների հանդեպ ճնշման դեպքերի մասին: Քվեարկության օրը ՄԸԴԱ-ի դիտորդները հայտնել են ՀՀԿ ակտիվիստների կողմից ընտրողներին ուղղորդելու դեպքերի, ընտրական տեղամասերում և դրանցից դուրս լարված իրավիճակների, ընտրական գործընթացների անհարկի միջամտությունների, ինչպես նաև ձայների գնման դեպքերի մասին:[70] Նման անկարգությունները, որոնք հաղորդվել են նաև այլ միջազգային և տեղական դիտորդների կողմից, կարող էին բացասաբար անդրադառնալ ընտրողների ազատորեն քվեարկելու հնարավորության վրա, ինչը պահանջվում է ԵԱՀԿ 1990-ի Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ԿԸՀ կողմից տեղեկացվել է ընտրությունների օրը ընտրական հանձնաժողովների կողմից պաշտոնապես գրանցված ութ բողոքների մասին, որոնք նշել են կոպիտ խախտումների մասին, ինչպիսիք են քվեատուփերի լցոնում, բազմակի քվեարկություն, չլիազորված անձանց կողմից քվեարկություն և գործադիր պաշտոնյաների կողմից միջամտություններ և ճնշումներ: Տեղական դիտորդների կողմից ներկայացված բոլոր բողոքները համարվել են անընդունելի: ՏԸՀ մատյաններում տեղական դիտորդների և թեկնածուների վստահված անձանց կողմից գրանցվել են 40 խախտման դեպքերի մասին: Ի լրումն, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղեկացվել է, որ թեկնածուների վստահված անձինք և հավատարմագրված դիտորդները փորձել են ներկայացնել մի շարք լրացուցիչ բողոքներ, սակայն հանդիպել են ՏԸՀ-ների կողմից խոչընդոտների՝ ներառյալ խախտումների մասին իրենց մատյաններում գրանցում կատարելուց կամ պաշտոնական բողոք ընդունելուց հրաժարվելու դեպքեր:

---

70 Վանաձորում մի կին, որն աշխատել է հանրային կազմակերպությունում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդներին հայտնել է, որ ինքը 30,000 ՀՀ դրամ է (55 եվրո) առաջարկել նրանց ովքեր իրենց ընտանիքի առնվազն երկու այլ անդամի հետ «կընդգրկվեն ցուցակում» գործող նախագահի օգտին քվեարկելու համար: Տավուշի մարզում երկարաժամկետ դիտորդները մի քանի աղբյուրներից տեղեկացվել են, որ իրենց 5000 ՀՀ դրամ (9 եվրո) է առաջարկվել գործող նախագահի օգտին քվեարկելու համար: Գյումրիում երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են, որ ՕԵԿ կուսակցության գրասենյակում կազմվել է այն ընտանիքների ցուցակը, որոնք համաձայնվել են մասնակցել ընտրություններին և իբրև թե յուրաքանչյուր ընտանիք 30.000 ՀՀ դրամ կստանար գնալ և ընտրելու համար: Նմանատիպ այլ դեպքերում երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են Շիրակի և Տավուշի մարզերում 5000-ական ՀՀ դրամ է բաժանվել: Սյունիքի մարզում ՏԸՀ նախագահը, երբ իրեն հարցրել են մասնակցության բարձր մակարդակի մասին, դիտորդներին պատասխանել է, որ « այդպես էլ պետք է լինի, քանի որ մենք վճարել ենք», հետո ուղղել է իրեն ավելացնելով՝ «որպեսզի միայն գան ու քվեարկեն, այլ ոչ թե ում համար քվեարկեն»: Ասպարեզ օրաթերթի ղեկավարը (Շիրակի մարզ) հայտնել է, որ ՀՀԿ-ն ասել է մարզպետներին ընտրողների բարձր մասնակցություն ապահովել և սկսել 5,000-ից 10,000 ական ՀՀ դրամ (9-18 եվրո) բաժանել յուրաքանչյուր ձայնի համար: Քվեարկության օրից օրեր առաջ Գյումրիում տեղակայված Գալա հեռուստաընկերությունը հեռարձակել և իր կայքում է տեղադրել հետաքննչական բազմաթիվ զեկույցներ՝ գործող նախագահի կողմնակիցների կողմից կազմակերպված ձայների գնման բազմաթի եղանակների և հանգամանքների վերաբերյալ. Տես՝ http://www.galatv.am.

Ա. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՄԸԴԱ դիտորդները դրական են գնահատել բացման գործընթացները դիտակված բոլոր 75 ընտրական տեղամասերում, բացառությամբ երկուսի, թեպետ նկատվել են որոշ ընթացակարգային խնդիրներ: Մասնավորապես, դիտորդները հայտնել են, որ ինը տեղամասերում չհրկիզվող պահարանի, որտեղ գիշերվա ընթացքում պահվել են ընտրությունների վերաբերյալ նյութերը, կողպեքը փակ չի եղել, երեք դեպքում անշարժ և երկու դեպքում շարժական քվեատուփերի պատշաճ կերպով կնքված չեն եղել: Երեք տեղամասերում ՏԸՀ անդամ չհանդիսացող անձինք ուղղորդել կամ միջամտել են գործընթացին:

Թեպետ քվեարկության գործընթացը կանոնավոր էր և լավ կազմակերպված դիտարկված 970 տեղամասերից մեծ մասում, ՄԸԴԱ-ի դիտորդները բացասական են գնահատել դեպքերի 5 տոկոսը հիմնականում գործընթացին ոչ պատշաճ միջամտության, լարվածության կամ անհանգստության, ընտրական տեղամասերի ներսում մարդկային կուտակումների ու տեղամասերի դիմաց մեծ խմբերի, ինչպես նաև քվեարկության ժամանակահատվածում մի շարք կոպիտ խախտումների պատճառով:

Գրեթե ամենուր անհրաժեշտ ընտրական և տեղեկատվական նյութերն առկա են եղել և ընտրացուցակները տրամադրված են եղել հասարակական վերանայման համար, սակայն 24 դեպքում ընտրատեղամասերը հայտարարվել են քվեարկության համար ոչ համապատասխան: Դիտարկված ընտրական տեղամասերից 500-ը (55 տոկոս) մատչելի չեն եղել հաշմանդամների համար, իսկ 219 տեղամասերում ներքին հարդարանքը ևս հարմարեցված չի եղել հաշմանդամների համար: Դիտարկված տեղամասերից 3 տոկոսում կազմակերպվածության բացակայությունը կամ ՏԸՀ անդամների և վստահված անձանց կամ դիտորդների միջև տարաձայնությունները բացասաբար են անդրադարձել քվեարկության գործընթացի վրա: ՄԸԴԱ-ի դիտորդները հայտնել են դիտարկված 51 տեղամասերում (5 տոկոս) մարդկային կուտակումների, 77 տեղամասում (8 տոկոս)՝ դրսում սպասող ընտրողների մեծ խմբերի և 18 տեղամասում (2 տոկոս)՝ լարվածության կամ անհանգստության մասին: Նրանք նաև հայտնել են 64 դեպքի մասին (դիտարկումների 7տոկոս), երբ չլիազորված անձինք, մեծամասամբ վստահված անձինք, միջամտել կամ ուղղորդել են ՏԸՀ-ների աշխատանքները: Դիտորդները հայտնել են 9 դեպք, երբ տեղամասերում գտնվող անձանց կողմից փորձ է կատարվել ընտրողների ընտրության վրա ազդեցություն ունենալ, ինչպես նաև տեղամասից դուրս ընտրողների վրա ճնշումներ կամ սպառնալիքներ գործադրելու 30 դեպք:

Հետագա քայլեր պետք է ձեռնարկվեն չլիազորված անձանց կողմից ընտրական գործընթացներին միջամտելու կայուն խնդիրը լուծելու համար: Ընտրական տեղամասերում և ԸԸՀ-ներում մարդկային կուտակումների խնդիրը պետք է բարձրաձայնվի, օրինակ՝ բավականաչափ մեծ տարածքներ տրամադրելու և այս տարածքների ներսում գտնվող անձանց նկատմամբ առավել արդյունավետ վերահսկման միջոցով: Ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի ընտրական տեղամասերը հաշմանդամների կարիքներին համապատասխան դարձնելու համար:

ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են, որ դիտարկված ընտրական տեղամասերից մեծ մասում հիմնական քվեարկության գործընթացի պահանջները պահպանվել են, ներառյալ ընտրողների փաստաթղթերի ստուգումը, ընտրողների գրանցումը և քվեաթերթիկների ծրարներ և ընտրողների անձնագրերի կնքումը: Թեպետ ընտրողների անձնագրերը կնքելու համար նախատեսված հատուկ կնիքը, որը բազմակի ընտրության դեմ երաշխիքներից մեկն էր, պետք է տեսանելի մնար առնվազն 12 ժամ, ապացուցվել է, որ հեշտ անցանելի է, չնայած ԿԸՀ կողմից նախապես փորձարկված լինելուն: Դիտարկված տեղամասերից 6 տոկոսում ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի նշել իրենց ընտրաթերթիկները և 12 տոկոսում նրանք ոչ միշտ են դրել այն ծրարի մեջ ընտրախուցը լքելուց առաջ:

ՄԸԴԱ-ի դիտորդները ընտրությունների օրը արձանագրել են մի շարք կոպիտ խախտումներ, ներառյալ խմբակային քվեարկություն և ոչ պատշաճ կարգով կնքված ընտրատուփերի առկայություն (յուրաքանչյուրը 5ական տոկոս), ընտրողների ցուցակներում մի շարք նույնանման ստորագրությունների առկայության և վստահված անձանց կողմից քվեարկության (յուրաքանչյուրը 3-ական տոկոս) և բազմակի քվեարկության (2 տոկոս) դեպքեր: ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են քվեատուփերի լցոնման ութ դեպքի նշումների մասին: Դիտարկված ընտրատեղամասերի 7 տոկոսում մեկ կամ ավելի ընտրողներ ետ են դարձվել, քանի որ, հիմնականում, նրանց անունները բացակայել են տվյալ տեղամասի ընտրական ցուցակներից: Դիտորդները նշել են ընտրակաշառքի մի քանի հնարավոր դեպքերի մասին և երկու դեպքում էլ անմիջականորեն դիտարկել են:

Իշխանությունները պետք է արդյունավետ երաշխիքներ տրամադրեն, ներառյալ հատուկ մեխանիզմներ, բազմակի քվեարկության դեմ ու քվեարկության գաղտնիության ապահովման համար և պատշաճ ու կանոնավոր կեպով կիրառեն դրանք: Իշխանությունները պետք է նաև բարելավեն ընտրողների կրթությունը և ընտրական հանձնաժողովների անդամների ու ոստիկանների վերապատրաստումը՝ նման խախտումները արդյունավետորեն կանխելու և/կամ պաշտպանության համար:

Բ. ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄ

ՄԸԴԱ-ի դիտորդների կողմից դիտարկված 106 ընտրական տեղամասերում, բացառությամբ 9 տեղամասի, ձայների հաշվարկման գործընթացը դրական է գնահատվել: Որոշ դիտորդներ զեկուցել են ընթացակարգային սխալների մասին՝ ներառյալ քվեարկությունից անմիջապես հետո ձայների հաշվակման գործընթացը չսկսելու (11 դեպք) և օրենքով պահանջվող հիմնական տվյալներ ստուգման ընթացակարգերի, ինչպիսիք են ընտրողների և ընտրական ցուցակներում ստորագրությունների քանակը չստուգելու, վերաբերյալ (համապատասխանաբար 7 և 9 դեպքեր): Մի քանի դիտորդներ արձանագրել են, որ հնարավոր խախտումների դեմ երաշխիքները, ինչպիսիք են ընտրողների ցուցակների, չօգտագործված քվեաթերթիկների և ծրարների փաթեթավորումը, ՏԸՀ-ների կողմից շրջանցվել են:

Դիտարկված ձայների հաշվարկման 10 դեպքում ՏՀՀ-ները ձայների հաշվարկումը իրականացրել են ոչ թափանցիկ եղանակով՝ անտեսելով բոլոր ծրարներն ու քվեաթերթիկները ցուցադրելու պահանջը՝ այնպես, որ բոլոր ներկաները կարողանան տեսնել, թե ում համար են դրանք նշված: Նման դեպքերը, քվեաթերթիկների վավերականությունը անհիմն և ոչ միատեսակ եղանակով որոշելու հետ միասին, ինչը դիտարկվել է վեց դեպքում, կարող են ստվեր գցել որոշ ընտրական հանձնաժողովների անդամների անաչառության վրա և նվազեցնել հայտարարված ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահությունը:[71] Դիտարկված ձայների հաշվարկման 11 դեպքերում ՏՀՀ-ները խնդիրներ են ունեցել արդյունքների արձանագրությունները լրացնելիս, իսկ 7 դեպքերում արձանագրության ձևը նախապես ստորագրված է եղել: ՄԸԴԱ-ի դիտորդները արձանագրել են, որ 10 դեպքում չլիազորված անձինք միջամտել կամ ուղղորդել են ձայների հաշվարկման գործընթացը, իսկ 14 դեքում ՏՀՀ անդամ չհանդիսացող անձինք մասնակցել են հաշվարկման գործընթացին: Չլիազորված անձանց կողմից նման անհարկի միջամտությունները մտահոգիչ են, քանի որ դրանք նվազեցնում են ընտրությունների կազմակերպման անկախության սկզբունքը (տես ներքոնշյալ առաջարկությունը):

Աղյուսակավորման գործընթացը գնահատվել է ընդհանուր առմամբ դրական, պատշաճ և լավ կազմակերպված: 41 ԸՀՀ-ներից միայն մեկն է բացասական գնահատվել, իսկ 3 այլ ԸՀՀ-ներում գործընթացի որոշ փուլեր են բացասական գնահատվել: ԸՀՀ-ների մեծ մասում աղյուսակավորման գործընթացը որակվել է որպես թափանցիկ, սակայն, 12 ԸՀՀ-ների տարածքներ համապատասխան չեն եղել և մարդկային կուտակումները բացասական է ազդել նրանց կողմից ՏՀՀ-ների արձանագրությունները ստանալու և մշակելու վրա: ՄԸԴԱ-ի դիտորդները զեկուցել են, որ համապատասխան ԸՀՀ-ներ ժամանման պահին ոչ բոլոր ՏՀՀ-ների արձանագրություններն են ամբողջովին լրացված եղել (36 զեկույցներ): Նրանք նաև արձանագրել են դեպքեր (19 զեկույց), երբ ՏՀՀ-ները ստիպված են եղել ուղղել թվաբանական սխալներ (օրենքին համապատասխան), սակայն արձանագրային սխալները հինգ դեպքում ուղղվել են ԸՀՀ անդամների կողմից (օրենքով թույլատրված չէ): 12 ԸՀՀ-ներում ՄԸԴԱ-ի դիտորդները ի վիճակի չեն եղել դիտարկել արդյունքների համակարգչային մուտքագրումը:

Գ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Փետրվարի 19-ին նախնական տվյալները հայտարարելուց հետո, ԿԸՀ-ն վերջնական տվյալները հայտարարեց փետրվարի 25-ին, ըստ որի պարոն Սարգսյանը վերընտրվել էր որպես նախագահ:[72] Արդյունքների արձանագրությունը ստորագրվել է ԿԸՀ բոլոր յոթ անդամների կողմից:

---

71 Քվեաթերթիկների վավերականությունը պետք է որոշվի իրավական նորմերին համապատասխան (այսինքն ողջամտորեն) և բոլորի համար կիրառելով միևնույն չափանիշները՝ անկախ նրանից թե ում օգտին է քվեարկված եղել (այսինքն հետևողականորեն)

72 ԿԸՀ-ի պաշտոնական արդյունքների արձանագրությանը համաձայն, պարոն Սարգսյանը ստացել է վավեր ձայների 58.64 տոկոսը, պարոն Հովհաննիսյանը՝ 36.74 տոկոսը, պարոն Բագրատյանը՝ 2.15 տոկոս, պարոն Հայրիկյանը՝ 1.23 տոկոս, պարոն Ղուկասյանը՝ 0.57 տոկոս, պարոն Սեդրակյանը՝ 0.42 տոկոս և պարոն Մելիքյանը՝ 0.24 տոկոս. Տես՝ http://res.elections.am/images/doc/18.02.13v.pdf

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի՝ ԿԸՀ-ի կողմից հրապարակված արդյունքների վերլուծությունը սերտ հարաբերակցություն է ցույց տալիս ընտրություններին մասնակցության և գործող նախագահի կողմից ստացված ձայների քանակի միջև՝ այդ թվում միջինից բարձր մասնակցություն ունեցած ՏԸՀ-ներում ևս ձայների մեծ բաժինը եղել է գործող նախագահի օգտին: 1988 ընտրական տեղամասերից 1746-ը ունեցել են 300 կամ ավելի գրանցված ընտրողներ:[73] Դրանցին 144-ում ընտրողների մասնակցությունը գերազանցել է 88 տոկոսը, ինչը անհավանականորեն բարձր է թվում, այս տեղամասերից 115-ում գործող նախագահին ստացել է ձայների 80 տոկոսից բարձր: 303 տեղամասերից 198-ում, որտեղ մասնակցությունը եղել է 70 -80 տոկոս, գործող նախագահին ստացել է ձայների ավելի քան 70 տոկոսը: 249 տեղամասերից 40-ում, որտեղ մասնակցությունը եղել է 50 տոկոսից ցածր, գործող նախագահը ստացել է 50 տոկոսից ավել, իսկ պարոն Հովհաննիսյանը ստացել է 55 տոկոսից ավել 155 տեղամասում: Գործող նախագահի բարձր արդյունքներ ունենալու միտումը դիտարկված այն տեղամասերում, որտեղ մասնակցությունը բարձր է եղել, ցույց է տալիս քվեարկության և ձայների հաշվարկման հետ կապված կոպիտ խախտումների հնարավորությունը: Սա մտահոգություններ է առաջացնում ընտրական գործընթացների արդարության վերաբերյալ:

Համաձայն ԿԸՀ կողմից հրապարակված վերջնական արդյունքների, 50,976 ընտրաթերթիկ եղել է անվաներ (քվեարկված բոլոր ձայների 3.4 տոկոս): Նրանց տվյալը զգալիորեն տատանվել է՝ թիվ 8 ԸԸՀ-ում 7.9 և թիվ 7 ԸԸՀ-ում 7.3 տոկոսից մինչև 1.5 տոկոս թիվ 18, 20 և 24 ԸԸՀ-ներում: [74] Որոշ ՏԸՀ-ներում անվավեր հայտարարված քվեաթերթիկների թիվը, որը գերազանցում է քվեարկված քվեաթերթիկների 20 տոկոսը, մտահոգություններ է առաջացնում: [75]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ի վիճակի է եղել համեմատել ՄԸԴԱ-ի դիտորդների կողմից ձեռք բերված ՏԸՀ-ների 55 հաստատված արձանագրություններ ԿԸՀ կայքում տեղադրված պաշտոնական տվյալների հետ: Ոչ մի լուրջ անհամապատասխանություն չի հայտնաբերվել, թեպետ առկա են եղել փոքր տեխնիկական սխալների 12 դեպք՝ այս տեղամասերում գրանցված ընտրողների թվի հետ կապված:

XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՕՐՎԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ԿԸՀ կողմից նախնական արդյունքների հրապարակումից հետո, պարոն Հովհաննիսյանը վիճարկել է ընտրությունների արդյունքները, բողոքի ցույցեր կազմակերպել Երևանում և մարզերում որոշ քաղաքներ: Նա պահանջել է, որպեսզի ընտրություններին առնչվող բոլոր խախտումները հետաքննվեն և նախագահական ընտրությունների երկրորդ փուլ անցկացվի: Որպես այլընտրանք, նա պահանջել է կառավարության հրաժարականը և արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացում: Ոստիկանությունը լրատվամիջոցների միջոցով հայտարարել է, որ այս հանրահավաքները անօրինական են

[73] Բոլոր այս տեղամասերը, բացառությամբ մեկի կանոնավոր տեղամասեր են, այսինքն ձևավորված չեն երկարաժամկետ նախնական կալանքի վայրերում կամ բժշկական հաստատություններում:

[74] Անվավեր քվեաթերթիկների այս մեծ թիվը հնարավոր է պայմանավորված լինի նրանով, որ ՀԱԿ-ը կոչ է արել իր աջակիցներին անվավեր դրաձնել իրենց քվեաթերթիկները:

[75] Օրինակ 19/1, 19/5, 8/8, 7/9, 19/21, 12/22, 28/26 և 34/29 ՏԸՀ-ներ.

և վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել:[76] Ընդդիմադիր քաղաքական կուսակցություններից ՀՅԴ-ն պաշտոնապես աջակցել է բողոքի ցույցերը, ինչպես նաև ՀԱԿ որոշ ակնառու քաղաքական գործիչներ: Պարոն Հովհաննիսյանն մեծ բողոքի ակցիա է կազմակերպել մարտի 10-ից 30-ը՝ շարունակելով իր բողոքի ցույցերը:

Հիմնական հեռարձակվող լրատվամիջոցները, այդ թվում Հանրային Հ1 հեռուստաալիքը, հետընտրական իրադարձությունների լուսաբանման մեջ ցուցաբերել են խտրական մոտեցում՝ ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատական տեսակետները սահմանափակելու նկատելի միտումով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից մշտադիտարկված բոլոր լրատվամիջոցները կանոնավոր կերպով լուսաբանել են պարոն Հովհաննիսյանի կողմից կազմակերպված հանրահավաքները և բողոքի ցույցերը: Այնուամենայնիվ, խոշոր հեռուստաալիքները հաճախ ներկայացրել են հանրահավաքների միայն ընդհանուր, ժամանակ առ ժամանակ սահմանափակ և մակերեսային լուսաբանում. Արմենիա հեռուստաընկերությունը բողոքի ցույցերը կողմնակալ և բացասական կերպով է նկարագրել: Միաժամանակ, այս հեռուստաալիքները պարբերաբար նշել են, որ հանրահավաքները անօրինական են՝ հաղորդելով այս առումով արված ոստիկանության հայտարարությունը:

Հեռուստաալիքներով, այդ թվում Հ1 հեռուստատեսությամբ, ԸՄԴԱ-ի Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարության լուսաբանումը հարցականի տակ է դրել նրանց՝ ընտրություններին օբյեկտիվ և անկախ նկարագիր տալու ջանքերի արժանահավատությունը: Հեռուստաալիքների մեծ մասը (բացառությամբ Երկիր մեդիա և Կենտրոն հեռուստատեսության) հիմնականում մատնանշել են դրական կողմերը և ընդհանուր առմամբ խուսափել են ներկայացնել զեկույցում նշված քննադատությունները և բացթողումները:[77] Մի շարք առցանց լրատվական միջոցներ, ինչպես նաև Ազատությունը ռադիոն և Հանրային ռադիոն ներկայացրել են բազմաբնույթ տեսակետներ և ավելի հավասարակշիռ լուսաբանում:

Պարոն Հովհաննիսյանի վստահված անձինք 16 ՏԸՀ-ներում վերահաշվարկի և 120 ՏԸՀ-ների արդյունքներն անվավեր ճանաչելու դիմումներ են ներկայացրել: Մեկ

---

76 Համաձայն «Խաղաղ հանրահավաքներ և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որևէ իրադարձությանն արձագանքելու նպատակով կազմակերպված հանրահավաքը որակվում է որպես չնախատեսված և հրատապ: Նման դեպքերում նախապես տեղեկացնելու յոթնօրյա պահանջի չի կարող պահպանվել, սակայն պահանջվում է անհապաղ տեղեկացնել ոստիկանության: Ոստիկանությունը հայտնել է, որ պարոն Հովհաննիսյանը ամեն օր տեղեկացրել է իրենց հանրահավաքների վերաբերյալ: Տես՝ ՄԻԵԴ-ի Բուկտան և այլոք ընդդեմ Հունգարիայի վճիռը http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-81728#. 36 պարբերություն. «Դատարանը վերահաստատում է, որ այն դեպքերում, երբ ցուցարարները բռնության արարքներ չեն իրականացնում, կարևոր է, որ հանրային իշխանությունները խաղաղ հանրահավաքների նկատմամբ ցուցաբերեն որոշ աստիճանի հանդուրժողականություն, եթե Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված հանրահավաքների ազատության իրավունքը ենթակա չէ ամբողջությամբ սահմանափակման», (տես Օյա Ատամանն ընդդեմ Թուրքիայի no. 74552/01, §§ 41-42, ECHR 2006-XIV):

77 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ հետընտրական միջանկյալ զեկույցը հրապարակվել է մարտի 2-ին: Սակայն, մինչև մարտի 4-ը ԸԴԱ-ի փակումը խոշոր հեռուստաընկերություններից և ոչ մեկը (հանրային Հ1, Արմենիա և Շանթ հեռուստաալիքներ) չի հայտնել այդ մասին իրենց լուրերում:

վերահաշվարկի դիմում է ներկայացվել պարոն Սարգսյանի վստահված անձի կողմից: Վերահաշվարկի բոլոր դիմումները մերժվել են, քանի որ դիմումատուները համարվել են ոչ իրավասու դիմում ներկայացնելու համար: [78] ՏԸՀ-ների և ԸԸՀ-ների կողմից ներկայացված երեք վերահաշվարկի դիմումներ բավարարվել են, և բացահայտվել են չնչին անճշտություններ:[79]

ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ընտրություններից հետո ԸԸՀ-ների կողմից գրանցվել է 80-ից ավել բողոքներ, որոնցում հիմնականում պահանջվել է վերահաշվարկել կամ անվավեր ճանաչել ընդհանուր առմամբ 140 ՏԸՀ-ների արդյունքները: Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է բողոքներ ներկայացնելու իրավունքը միայն նրանց, ում ընտրական իրավունքներն են անմիջապես վտանգված, այդպիսով զգալիորեն սահմանափակելով ընտրողների, հավատարմագրված դիտորդների և քաղաքացիական հասարակության խմբերի՝ ընտրական իրավախախտումների համար դատական պաշտպանություն հայցելու իրավունքը: 73 ընտրատեղամասերում արդյունքները անվավեր ճանաչելու բողոքները չեն ընդունվել վարույթ, քանի որ նրանք ներկայացվել են օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո և 47 տեղամասերին վերաբերող բողոքները մերժվել են ըստ էության: [80] Դիտորդների կողմից ներկայացվող բոլոր բողոքները չեն ընդունվել վարույթ, քանի որ նրանք իրավասու չեն եղել բողոք ներկայացնել, եթե այն չի վերաբերում որպես դիտորդ իրենց անմիջական իրավունքի խոչընդոտմանը: Թեկնածուների վստահված անձանց կողմից ներկայացված բողոքները նույնպես չեն ընդունվել վարույթ այն պատճառաբանությամբ, որ բողոքատուները ներկա

---

78 Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ընտրական տեղամասին ընտրությունների արդյունքները կարող են վերահաշվարկվել, եթե պահանջ է ներկայացրել թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, կամ ԸԸՀ նախագահի նախաձեռնությամբ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկում է, եթե դիմող անձը ԸԸՀ-ին ներկայացրել է ձայների հաշվարկման ընթացքում կատարված կոպիտ խախտումներ վերաբերյալ հիմնավոր ապացույցներ կամ եթե ԸԸՀ-ն հայտնաբերել է լուրջ սխալներ, որոնք կարող են ազդել արդյունքների վրա:

79 Հանձնաժողովի նախագահի պահանջով թիվ 03/33 տեղամասում կայացած վերահաշվարկի արդյունքում հայտնաբերվել է թեկնածուներից երկուսի օգտին քվեարկած մեկական լրացուցիչ ձայն: Երկու վերահաշվարկ անցկացվել է վերադաս ԸԸՀ-ի կողմից, և վերահաշվարկի արդյունքում մեկ քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր (ՏԸՀ թիվ 02/03), նախկինում անվավեր համարվող երեք քվեաթերթիկներ տրվել են ի օգուտ թեկնածուներից մեկին, և մեկ ձայն փոխանցվել է մի թեկնածուից ի օգուտ մյուսին, իսկ ընտրողների թիվը նվազել է 11 ձայնով (թիվ 02/05 ՏԸՀ):

80 ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ «ի նկատի ունենալով հարցի քաղաքական նրբությունը և ընտրություններում երկրորդ տեղը գրաված թեկնածուի պահանջները, ԿԸՀ-ի Իրավիճակային վերլուծության կենտրոնը իրականացրել է պարոն Հովհաննիսյանի պահանջները բավարարվելու դեպքում այդ ընտրատարածքներում ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու ազդեցության մոդելավորում:» Այդ մոդելավորման արդյունքների համաձայն, «գործող նախագահը այնուամենայնիվ տանելու էր համոզիչ հաղթանակ առաջին փուլում», եթե անգամ այն 120 ընտրական տեղամասերում, որտեղ պահանջվել էր կատարել վերահաշվարկ, պարոն Սարգսյանի համար քվեարկած բոլոր ձայները հաշվարկվեին ի օգուտ պարոն Հովհաննիսյանի:

չեն գտնվել ընտրատեղամասերում: Բողոքների վերաբերյալ ԿԸՀ-ի կողմից ԸԴԱ-ին տրամադրվող տեղեկատվությունը երբեմն եղել է իրարամերժ և ոչ լիարժեք: [81]

Ընտրություններից հետո ԿԸՀ-ն ստացել է չորս բողոք: Մեկ բողոքը եղել է պարոն Հովհաննիսյանի կողմից, որտեղ նա պահանջել է անվավեր ճանաչել պարոն Սարգսյանի գրանցումը որպես թեկնածու, քանի որ վերջինս գերազանցել է նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը տաս տոկոսով: ԿԸՀ-ն մերժել է բողոքն ըստ էության նշելով, որ բողոքում նշված ծախսերը, ինչպիսիք են օրինակ նախընտրական շտաբների վարձակալությունը և այդ գրասենյակների վրա տեղադրված քարոզչական պաստառների ծախսերը, չպետք է ամարվեն քարոզարշավի ծախս: [82] Վարչական դատարանը ուժի մեջ է թողել ԿԸՀ որոշումը:

Մեկ այլ դեպքում, բողոք է ներկայացվել թիվ 25 ԸԸՀ որոշման դեմ, որը մերժել է վեց ընտրական տեղամասերի ընտրությունների արդյունքների վերահաշվարկման դիմումը՝ հիմնավորելով, որ պարոն Հովհաննիսյանի ներկայացուցիչները նման իրավունք չունեն: ԸԸՀ որոշումը ուժի մեջ է թողնվել ԿԸՀ կողմից, ինչը հարցականի տակ է դնում իրավական ներկայացուցչության ինստիտուտը: Ավելին, համաձայն ԿԸՀ կողմից Ընտրական օրենսգրքի 48.1 հոդվածի մեկնաբանման, նախագահի թեկնածուն պետք է ներկա լինի տվյալ ընտրական տեղամասում ձայների հաշվարկի գործընթացին, որպեսզի իրավունք ունենա դիմելու այդ տեղամասի ձայների վերահաշվարկի համար: [83]

Քանի որ ընտրական տեղամասերի արդյունքների վերահաշվարկ պահանջելու վերաբերյալ գործող դրույթները հակասում են արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, պետք է քննարկվի Ընտրական օրենսգիրքը փոփոխելու հարցը, այնպես որ ցանկացած շահագրգիռ անձի նամն բողոք ներկայացնելու իրավունք տրվի:

Մարտի 4-ին պարոն Հովհաննիսյանը և պարոն Ղուկասյանը դիմում են ներկայացրել Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու

---

81 ԿԸՀ-ն տրամադրել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ոչ հետևողական տեղեկություններ, օրինակ, ՏԸՀ-ների մատյաններում գրանցված մի շարք իրավախախտումների, ստացված բողոքների թվի և ՏԸՀ-ների արդյունքները վերահաշվարկելու դիմումների թվի վերաբերյալ: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը տրամադրել է ԸԴԱ-ին ԿԸՀ ուղղված բողոքների պատճենները, որոնք չեն ներգրավվել ԿԸՀ-ի կողմից տրված տեղեկատվության մեջ:

82 Ինչպես սահմանված է «Ընտրական օրենսգրքի հոդված 26-ի հակասական մեկնաբանությունները բացառելու նպատակով պաշտոնական մեկնաբանություն» 2012 թվականի փետրվարի 16-ի ԿԸՀ-ի թիվ 33 որոշման մեջ: Համաձայն փետրվարի 18-ին հայտարարված և հրապարակված տեղեկատվությանը, գործող նախագահի նախընտրական քարոզչության ծախսերը կազմել են 99,8 մլն. ՀՀ դրամ (188,400 եվրո), որոնց ըստ օրենքով սահմանված առավելագույն չափը՝ 100,000 մլն. ՀՀ դրամ է (մոտ 188,700 եվրո):

83 48.1 հոդվածը սահմանում է, որ «Թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում»

համար: Պարոն Հովհաննիսյանը փաստարկել է, որ քարոզարշավի և ընտրությունների օրը կատարված խախտումները բավարար էին ընտրությունների արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար: Նա նաև հայցել է Սահմանադրական դատարանին հայտարարել իր հաղթանակը ընտրություններում: Պարոն Ղուկասյանը հայցել է դատարանին չեղյալ համարել ընտրությունները, որպես հիմնական ապացույց ներկայացնելով պարոն Սարգսյանի կողմից ընտրությունների վերաբերյալ ամերիկահայ երաժշտին ուղղված բաց նամակը: [84]

Դատարանը երկու գործերը քննել է միասնական վարույթում մարտի 11-ից 31-ը: Պարոն Սարգսյանը հրավիրվել է որպես գործի երրորդ կողմ, բայց ներկայացված է եղել Արդարադատության նախարարի և իր քարոզարշավի համակարգողի կողմից: [85] Պարոն Ղուկասյանը կարծիք է հայտնել, որ Արդարադատության նախարարի ներկայությունը կարող է ազդել դատարանի որոշման վրա:

Մարտի 14-ին դատարանը հաստատել է ԿԸՀ գործող նախագահին վերընտրված հայտարարելու որոշումը: Դատարանը հայտարարել է, որ հայցվորների կողմից ներկայացված ապացույցների մեծ մասը անհիմն էին և բավական չէին ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունենալու համար: Նա նաև հայտարարել է, որ ընտրությունների օրը հնարավոր խախտումները բարձրաձայնելու օրենքով սահմանված հնարավորությունը, ինչպես օրինակ ՏԸՀ արձանագրությունում հակադիր կարծիք գրանցելը, չի կասեցվել շահագրգիռ կողմերի կողմից: Այնուամենայնիվ, թիվ 17/05 ՏԸՀ-ում խախտումների վերաբերյալ ապացույցները ուսումնասիրելուց հետո դատարանը գնահատել է այս ՏԸՀ-ի արդյունքները որպես անարժանահավատ և փոխանցել է գործը Գլխավոր դատախազություն՝ հետագա քննության համար: ԿԸՀ-ն կարծիք է հայտնել, որ այս ընտրական տեղամասի արդյունքները չեն ազդում ընտրությունների արդյունքների վրա և դրանք չեղյալ համարելու ոչ մի պաշտոնական գործողություն չի ձեռնարկվել: Սահմանադրական դատարանը ընդգծել է, որ անհրաժեշտ են իրավական բարեփոխումներ և դրանք պետք է կատարվեն որպես բոլոր շահագրգիռների միջև խաղաղ երկխոսության արդյունք: Դատարանն իր որոշման մեջ չի նշել, թե օրենքի հատկապես որ ոլորտները պետք է բարեփոխվեն:

XIV. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն հանձնարարականները ներկայացվում են Հայաստանյան իշխանություններին, քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակությանը՝ քննարկման, նրանց հետագա՝ ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային չափանիշներին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ջանքերին աջակցելու համար: Սույն հանձնարարականները պետք է ընթերցել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից նախկինում, մասնավորապես 2012թ. խորհրդարանական ընտությունների վերջնական զեկույցում ներկայացված, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ

84 Նամակը տես՝ http://www.panorama.am/en/society/2013/02/26/sargsyan-tankyan/.

85 Արդարադատության նախարարը հայտարարել է, որ ինքը ներկայացնում է պարոն Սարգսյանին որպես քաղաքացի և որ ինքն այժմ գտնվում է կարճաժամկետ արձակուրդում:

և Վենետիկյան հանձնաժողովի համատեղ կարծիքում պարունակվող հանձնարարականների հետ համատեղ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատրաստակամ է աջակցելու Հայաստանյան իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը՝ ընտրական գործընթացների հետագա բարեփոխման համար:

Ա. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Իշխանությունները հատուկ միջոցներ պետք է ձեռնարկեն ընտրական գործընթացների ամբողջականության նկատմամբ հասարակական վստահությունը բարձրացնելու համար՝ ավելի մեծ հարգանք ցուցաբերելով քաղաքացիների՝ հիմնարար քաղաքացիական և քաղաքական նախասիրություններն ազատ արտահայտման իրավունքի նկատմամբ, ինչպես պահանջվում է ԵԱՀԿ 1990 Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ:

2. Պաշտոնյաները պետք է ձեռնապահ մնան վարչական միջոցները օգտագործելուց, այդ թվում իրենց պաշտոնի չարաշահումը իրենց աշխատակիցների և հասարակության նկատմամբ: Արդյունավետ ջանքեր պետք է գործադրվեն հանրային կառավարման, այդ թվում պետական և տեղական պետական պաշտոնյաների անաչառությունը ապահովելու համար: Նրանք պետք է զերծ մնան ընտրողների վրա թե՛ քարոզարշավի, և թե՛ քվեարկության օրը ճնշումներ գործադրելուց: Քրեական օրենսգրքը պետք է փոփոխվի, որպեսզի քարոզարշավի համար պաշտոնական դիրքի և վարչական միջոցների չարաշահումը սահմանվի որպես հանցագործություն:

3. Ընտրական հանձնաժողովները, իրավապահ մարմինները և դատարանները պետք է մեկնաբանեն, կիրառեն և գործածեն ընտրական իրավական դաշտը՝ հաշվի առնելով օրենքի ոգին և նպատակը, որն ուղղված է մասնակիցների համար հավասար մրցակցային դաշտ, ընտրողների կամքի ազատությունն և ընտրական գործընթացների ամբողջականությունն ապահովելուն:

4. Իշխանությունները պետք է հավաստիացնեն, որ համապատասխան երաշխիքներ են մշակվել և կիրառվում, որպեսզի հստակ տարանջատում կատարվի պետության և կուսակցության միջև, ինչպես պահանջվում է ԵԱՀԿ 1990 Կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերությամբ:

5. Ընտրողների գրանցման գործընթացի ամբողջականության նկատմամբ հասարակական վստահությունը բարձրացնելու նպատակով ազգային շահագրգիռները, այդ թվում իշխանությունների ներկայացուցիչները, քաղաքական կուսակցությունները, թեկնածուները և քաղաքացիական հասարակությունը պետք է ընդգրկվեն հանրային քննարկումներում և ընտրողների գրանցման հատուկ և վիճելի հարցերի շուրջ որոշումների կայացման համապարփակ գործընթացում (ի թիվս այլնի, արտասահմանում մշտական բնակով ընտրողների գրանցում, ստորագրված ընտրողների ցուցակները հրապարակային կամ այլ կերպ մատչելի դարձնել):

6. Նախկին և ներկա հանձնարարականները կատարելու նպատակով իշխանությունները խրախուսվում են օրենսդրական փոփոխություններ նախապատրաստություն սկսել՝ հանրային քննարկումների և համապարփակ գործընթացի միջոցով, որը կընդգրկի բոլոր հարակից շահագրգիռներին՝ այդ թվում քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակությանը:

Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

7. Ընտրական օրենսգրքի այն դրույթը, որը բոլոր դատապարտյալներին, անկախ իրենց կատարած հանցագործության ծանրությունից, զրկում է ընտրական իրավունքներից պետք է փոփոխվի:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

8. Ընտրություններին առնչվող օրենսդրության միատեսակ կիրառումն ապահովող միջոցառումները պետք է ուժեղացվեն: Սա ներառում է անհրաժեշտ որոշումներ և պարզաբանումներ ժամանակին ընդունելու ԿԸՀ լիազորության ընդլայնում, որոնց կիրառումը պարտադիր կլինի բոլոր շահագրգիռների համար: ԿԸՀ-ն պետք է երաշխավորի, որ այն ընդունում է բոլոր անհրաժեշտ որոշումները և պարզաբանումները և որ դրանք համապատասխանում են օրենքի տառին և նպատակին:

9. ԿԸՀ-ն պետք է շարունակի ընտրական գործընթացների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ձայների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացակարգերին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

10. Ընտրողների ցուցակների ճշտությունը բարելավելու ջանքերը պետք է շարունակվեն: Այս նպատակով, իշխանության տարբեր մարմինների միջև պետք է ստեղծվի ծանուցման արդյունավետ համակարգ, որպեսզի դյուրինացվի տեղեկատվության փոխանակումը և հնարավորություն տրվի ընտրողների ռեգիստրում և ընտրողների ցուցակներում ժամանակին ուղղումներ կատարել:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

11. Ընտրական օրենսգիրքը պետք է լրացվի, որպեսզի թեկնածուների գրանցումը չեղյալ հայտարարելը հնարավոր լինի միայն բացառիկ դեպքերում, որոնք պետք է հստակ և սպառիչ կերպով սահմանված լինեն Ընտրական օրենսգրքում:

12. Թեկնածուների համար քաղաքացիության և բնակության տասը տարվա ցենզը խիստ է և պետք է վերանայվի: Ամենաքիչը, օրենքը պետք է պարզաբանի բնակության պահանջը որպես մշտական բնակություն՝ լավագույն փորձին համապատասխան և սահմանի թափանցիկ և օբյեկտիվ գործընթացներ՝ որոշելու

համար, թե արդյոք այդ պահանջը բավարարված է: Բնակության պահանջը որոշելը չպետք է չափազանց խիստ լինի:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

13. Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի սահմանելով, որ նախընտրական քարոզչության շրջանը պաշտոնապես սկսում է ամենաուշը թեկնածուների գրանցման վերջնաժամկետին հաջորդող օրը, որպեսզի քարոզարշավը կարգավորող կանոնները կիրառելի լինեն:

14. Կուսակցությունների և նախընտրական շտաբերի գրասենյակները չպետք է տեղակայվեն պետությանը կամ տեղական իշխանություններին պատկանող կամ նրանց կողմից զբաղեցված շենքերում:

ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

15. Քարոզչության ֆինանսավորման համակարգի և ընդհանուր առմամբ ընտրական գործընթացների թափանցիկությունը, պատասխանատվությունը և դրանց նկատմամբ հասարակական վստահությունը բարձրացնելու համար իշխանությունները պետք է պարզաբանեն որոշ օրենսդրական միջոցառումներ կամ ներկայացնեն հստակ գործընթացներ, որոնք կդարձնեն այս համակարգը միասնական և գործածելի:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

16. Կարելի է քննարկել ՀՌԱՀ լիազորությունները և միջոցները բարելավելու հարցը, որոնք անհրաժեշտ են նրա կողմից լրատվամիջոցների ամբողջական և անկախ դիտարկում իրականացնելու համար՝ հեռարձակողներից հեռարձակումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու հանձնարարականի փոխարեն: Ավելին, կարելի է քննարկել մեթոդաբանությունը բարելավելու հարցը, որը թույլ կտա ՀՌԱՀ-ին դիտարկել և գնահատել լուսաբանման տոնը: Ի լրումն, կարելի է քննարկել նաև, որ ՀՌԱՀ-ն քարոզարշավի ժամանակահատվածից դուրս իրականացնի լրատվամիջոցների չպլանավորված դիտարկում:

17. Ընտրական օրենսգիրքը կարող է լրացվել, որպեսզի հեռարձակողներին տրվի ընտրությունների վերաբերյալ լուսաբանման ընդհանուր ուղեցույց: Նման դրույթները կարող են հիմնված լինել անաչառության և անկողմնակալության առկա պահանջի վրա, սակայն միևնույն ժամանակ թույլ տալով քարոզարշավի միջոցառումների անկախ խմբագրական լուսաբանում:

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

18. Իրավական դաշտը պետք է փոփոխվի, որպեսզի բացառվի կրկնակի ընդդատությունը և պարզեցվեն ընտրություններին առնչվող դիմումների և բողոքների ընթացակարգերը՝ սահմանելով մեկ միասնական ենթակայական

ընթացակարգ: Տարբեր օրենքներում սահմանված համապատասխան դիմումներին և բողոքներին վերաբերող դրույթները պետք է համախմբել մեկ տեղում կամ հղում կատարել Ընտրական օրենսգրքում: Ընտրություններին առնչվող գործերի քննության ժամանակահատվածը պետք է սահմանի արագ դատաքննություն:

19. Ընտրական օրենսգիրքը կարող է փոփոխվել՝ իրավունք տալով քաղաքացիներին (կամ մի խումբ քաղաքացիների), հավատարմագրված տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին դիմումներ ներկայացնել ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, այդ թվում քարոզչության անօրինական իրականացման և ընտրությունների արդյունքների դեմ:

20. Ընտրական հանձնաժողովները և դատարանները պետք է զերծ մնան դիմումների և բողոքների քննությունը մերժելուց: Նրանք պետք է պատշաճ կերպով ուսումնասիրեն բոլոր դիմումների էությունը և կատարեն բոլոր կից ապացույցների անկողմնակալ և ամբողջական ուսումնասիրություն: Ընտրական հանձնաժողովները պետք է ակտիվ դեր ստանձնեն դիմումները հիմնավորելու համար ապացույցների հավաքման հարցում և այս առումով, ավելի սերտ համագործակցեն իրավապահ մարմինների հետ:

21. Քրեական դատավարության օրենսգրքով պետք է սահմանվի ընտրությունների ժամանակահատվածում ընտրական իրավախախտումների հետաքննության և հետախուզության կարճ ժամանակահատված:

22. Ոստիկանությունը, դատախազությունը և հատուկ քննչական ծառայությունը խրախուսվում են իրականացնել ընտրական իրավախախտումների արդյունավետ և անաչառ հետաքննություն՝ արագ և հիմնավոր եղանակով, և պետք է ապահովեն, որ բոլոր մեղավորները պատշաճ կարգով բերվեն պատասխանատվության: Պետք է երաշխավորվի, որ ընտրական իրավախախտումները հետաքննելիս պատշաճ ընթացակարգերը պահպանվել, դրանք չիրականացվեն սպառնալի եղանակով և խոչընդոտող ազդեցություն չունենան ընտրական իրավախախտումների մասին քաղաքացիների կողմից հայտարարություններ ներկայացնելու վրա:

ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

23. Պետք է վերանայել տեղական դիտորդների պարտադիր ստուգարքի և հավատարմագրման պահանջը: Ինչպես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի կողմից նախկինում ասվել էր, դիտորդների ցանկացած վերապատրաստում պետք է լինի դիտարկող կազմակերպության պարտականությունը, այնուամենայնիվ, ԿԸՀ-ն կարող է քննարկել լրացուցիչ վերապատրաստումներ կազմակերպելու հարցը:

24. Ընտրական օրենսգիրքը կարող է փոփոխվել, որպեսզի հնարավոր լինի խուսափել տեղական դիտորդական կազմակերպության հավատարմագրումը կամայականորեն չեղյալ համարելու հնարավորությունից՝ նրա անհատ անդամների կողմից խախտումների դեպքում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ

25. Հետագա քայլեր պետք է ձեռնարկվեն չլիազորված անձանց կողմից ընտրական գործընթացներին միջամտելու կայուն խնդիրը լուծելու համար: Ընտրական տեղամասերում և ԸԸՀ-ներում մարդկային կուտակումների խնդիրը պետք է լուծվի, օրինակ բավականաչափ մեծ տարածքներ տրամադրելու և այս տարածքների ներսում գտնվող անձանց նկատմամբ առավել արդյունավետ վերահսկման միջոցով: Ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի ընտրական տեղամասերը հաշմանդամների կարիքներին համապատասխան դարձնելու համար:

26. Իշխանությունները պետք է արդյունավետ երաշխիքներ տրամադրեն, այդ թվում բազմակի քվեարկության դեմ և քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար հատուկ միջոցներ, և պատշաճ ու կայուն կերպով կիրառեն դրանք: Իշխանությունները պետք է նաև բարելավեն ընտրողների կրթությունը և ընտրական հանձնաժողովների անդամների ու ոստիկանության վերապատրաստումը՝ նման իրավախախտումներն արդյունավետ կանխելու և/կամ դրանցից պաշտպանության համար:

27. Քանի որ ընտրական տեղամասի ձայները վերահաշվարկելու համար առկա դրույթները հակասում են արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքին, պետք է քննարկվի Ընտրական օրենսգիրքը փոփոխելու հարցը, որպեսզի ցանկացած հետաքրքրված շահագրգիռ անձ նման դիմում ներկայացնելու իրավունք ունենա:

Հավելված. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ	ՍՏԱՑՎԱԾ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	
Ընտրողների հիմնական ցուցակների ընտրողների թիվը	2,509,434	
Քվեարկության օրն ընտրական տեղամասերում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	215	
Ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	14,300	
Հաշվառում չունեցող ընտրողների թիվը	508	
Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	1,733	
Ստացիոնար բուժհաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	1,629	
Ձերբակալված անձանց պահելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	3	
Էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցած լրացուցիչ ցուցակներում ընտրողների թիվը	228	
Բոլոր ցուցակներում ընտրողների ընդհանուր թիվը	2,528,050	
Քվեարկության մասնակիցների թիվը	1,521,489	
ՏԸՀ-ների կողմից մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	1,057,779	
Անվավեր քվեաթերթիկների թիվը	50,976	
Անճշտությունների գումարային չափը	702	
Թեկնածուի ազգանունը և անունը	**Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը**	**%**
Բագրատյան Հրանտ	31,643	2.15
Հայրիկյան Պարույր	18,096	1.23
Հովհաննիսյան Ռաֆֆի	539,693	36.74
Ղուկասյան Անդրիաս	8,329	0.57
Մելիքյան Արման	3,520	0.24
Սարգսյան Սերժ	861,373	58.64
Սեդրակյան Վարդան	6,210	0.42

Աղբյուր՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով http://www.elections.am]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցել անդամ երկրներին «ապահովել մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական հարգումը, հաստատել օրենքի գերակայություն, զարգացնել ժողովրդավարական սկզբունքները և (…) կառուցել, ամրապնդել և պահպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակությունում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան համաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդու իրավունքներ:

Վարշավայում (Լեհաստան) հիմնադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզյան համաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց, գրասենյակի անունը փոխվում է՝ մարդու իրավունքների և ժողովրդավարացման ընդլայնված լիազորություններն արտահայտելու նպատակով: Այսօր այն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում **ընտրությունների դիտարկման** ոլորտում առաջատար կազմակերպություն է: Ամեն տարի այն ղեկավարում և կազմակերպում է հազարավոր դիտորդների տեղակայում՝ գնահատելու համար, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների համար միջազգային այլ չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդոլոգիան հնարավորություն է ընձեռում խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջականությամբ: Աջակցության ծրագրերի միջոցով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը օգնում է անդամ երկրներին բարեփոխել իրենց ընտրական համակարգը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** միջոցառումներն ընդգրկում են՝ օրենքի գերակայություն, իրավական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա ու տեղաշարժման ազատություն և գենդերային հավասարություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարեկան իրականացնում է մի շարք նպատակային աջակցության ծրագրեր՝ ցանկանալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը աջակցում է նաև անդամ երկրներին կատարել իրենց պարտավորությունները՝ զարգացնելու և պաշտպանելու **մարդու իրավունքները** և հիմնարար ազատությունները՝ ԵԱՀԿ մարդու իրավունքների պարտավորություններին համապատասխան: Դա նվաճվում է տարբեր գործընկերների հետ աշխատանքով՝ համագործակցությունը ուժեղացնելու, հնարավորություններ ստեղծելու համար և թեմատիկ ոլորտներում փորձաքննություն տրամադրելով, ներառյալ ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքները, թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանության ընդլայնումը, մարդու իրավունքների ուսուցումը և վերապատրաստումը, մարդու իրավունքների դիտարկումը ու զեկուցումը և կանանց իրավունքները և պաշտպանությունը:

Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը անդամ երկրներին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու ատելության հիման վրա հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմինիստականության և անհանդուրժողականության այլ դեպքերի դեմ պայքարը: Հանդուրժողականության և

խտրականության բացառման ոլորտում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ գործողությունները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, դիտարկում, զեկուցում և ատելության հիման վրա հանցագործություններ և դեպքերի դեմ քայլերի հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականությունը, հարգանքը և փոխըմբռնումը բարձրացնող կրթական միջոցառումներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն անդամ Երկրներին խորհրդատվություն է տրամադրում իրենց «**Roma and Sinti**» վերաբերյալ քաղաքականությունում: Այն աջակցում է «Roma and Sinti» համայնքների միջև կարողությունների կառուցմանը և համագործակցությանը, և խրախուսում է «Roma and Sinti» ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ անդամ Երկրների սերտ համաձայնեցման և համագործակցության, ԵԱՀԿ կառույցների և ոլորտային աշխատանքների միջոցով, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ:
Ավել տեղեկատվություն հասանելի է ԺՀՄԻԳ կայքում (www.osce.org/odihr):